Ադրբեջանը, ըստ էության, դատում է հայկական ազգային պատմությունը, ազատագրական պայքարը, հայ ժողովրդի ձգտումները եւ Արցախի պատմական եւ մշակութային նշանակությունը: Սակայն մտադրությունը պարզապես հրապարակային նվաստացումը չէ: Ադրբեջանը ձգտում է Հարավային Կովկասում 30-ամյա հակամարտության վերաիմաստավորման:

Կարդացեք՝ էջ 4

Ասում եմ՝ ձեռքի հետ էլ հարց դնենք Նիկոլի առաջ՝ բա ասում էիր՝ ընտրախախտումների էջը փակված է, ինչո՞ւ ես խաբել ժողովրդին: Ո՞վ է տեսել, որ 7 տարի շարունակ համայնքը քանդած, կրիմինալի մեջ կորցրած քաղաքական ուժին այդ համայնքի բնակչությունը վերընտրի: Մարդիկ հո ապուշ չեն… Դու էլ ես հասկանում, չէ՞, Նիկոլ:

Կարդացեք՝ էջ 5



Ի՞նչ եք կարծում՝ եթե որեւէ մեկն իմանար, որ, օրինակ, ՔՊ-ն ձայնի համար 40 հազար դրամ ընտրակաշառք է բաժանում, նա կհամարձակվե՞ր դրա մասին բարձրաձայնել, իհարկե՝ ոչ, որովհետեւ կվախենար՝ մտածելով, որ իրեն դրա համար կարող են կալանավորել եւ զրկել ազատությունից, մեղադրել կեղծ մատնության կամ այլ հոդվածով:

Կարդացեք՝ էջ 8

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 184 (4086), 18 նոյեմբեր, երեքշաբթի, 2025

www.hraparak.am

Ղազախական ցորենի շուրջ բարձրացած աղմուկից հետո Նիկոլ Փաշինյանը փորձեց ձեռքերը լվանալ թեմայից՝ հայտարարելով, որ ցորենն իրենք չեն բերում, այլ՝ մասնավոր ընկերություն: Հայտնի է, որ բերողը Սամվել Ալեքսանյանի ընկերությունն է, որը Ղազախստանից անորակ, 4-րդ կարգի ցորեն է ներկրել: Փաշինյանն ԱԺ ամբիոնից հայտարարեց. «Այդ գնումը կառավարությունը չի իրականացրել՝ մասնավոր ընկերություն է արել՝ իր կարիքների համար: Կառավարությունն ընդամենը բանակցությունների արդյունքում ապահովել է ճանապարհի բացումը, իսկ գործարքը մասնավորն է կատարել: Եթե ապրանքը բերել է ավելի հարմար ճանապարհով, ուզում եմ հասկանալ՝ ի՞նչն է խնդիրը»: Ներկրող ընկերության պատասխանատուներից մեկից պարզեցինք, որ կառավարությունն ուղղակի պարտադրել է իր փիառի համար Ղազախստանից ներկրում իրականացնել: Մեզ վստահեցրին, որ ներկրված 15 տոննա ցորենն ալյուր չի դարձել, թեպետ էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը հայտարարել էր, թե ով գիտի՝ քանիսդ եք արդեն կերել այդ ալյուրից թխված հացը: Հետաքրքրվեցինք՝ ի՞նչ են արել ղազախական ցորենը, ասաց՝ մի մասն օղու արտադրության մեջ են կիրառել, մի մասը՝ որպես անասնակեր: Ի դեպ, ճանապարհը բացելու այս փիառի պատճառով Ռուսաստանը բարձրացրել է իր ցորենի գինը, որի հետեւանքները քաղաքացիները գուցե շուտով զգան իրենց մաշկի վրա:

Կառավարությունը շրջանառության մեջ է դրել արցախցիների բնակապահովման նոր նախագիծ, համաձայն որի՝ նախատեսվում է վարձավճարի երկարաժամկետ մասնակի հատուցում եւ սոցաջակցություն Արցախից տեղահանված 1-3 անդամ ունեցող ընտանիքներին, եթե նրանք բավարարում են բնակապահովման պետական աջակցության ծրագրի պայմաններին: Նախատեսվում է 120 ամիս աջակցություն տրամադրել՝ ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար 40 հազար դրամ: Սոցհարթակներում արցախցիներն իրենց դժգոհությունն են հայտնում, դեմ են բնակապահովման ծրագրի փոփոխությանը եւ նշում են, որ սա ծաղր է իրենց նկատմամբ, ճիշտ կլինի՝ կառավարությունն իրենց կորցրած անշարժ գույքի փոխհատուցման որոշում ընդունի՝ առանց որեւէ նախապայմանների:

Էջմիածինցիների գրպանը գցել չի ստացվի

Երեկ վաղ առավոտյան Նիկոլ Փաշինյանը, անդրադառնալով Վաղարշապատի ընտրություններին, իր գրառման մեջ նաեւ անդրադարձել է Մայր Աթոռի նկատմամբ իր ծրագրերին՝ ընդգծելով, որ այս ընտրությամբ քաղաքացիները «լիցք են տվել մեր սրբության սրբոցը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը Կտրիճ Ներսիսյանից ազատելու գործընթացին»: Փաշինյանի այս հայտարարությունը, թերեւս, պարզ մանիպուլյացիա է, որովհետեւ այս ընտրությամբ իշխանությունը Վեհարանի վրա գրոհելու քարտ-բլանշ իրականում չի տվել: Բանն այն է, որ Վաղարշապատ համայնքի սիրտը հանդիսացող Էջմիածին քաղաքում ՔՊ-ն ընդամենը բնակչության 30 տոկոսի քվեն է ստացել: 18 հազար 882 էջմիածինցի է ընտրություններին մասնակցել, որից ընդամենը 6 հազար 812-ն է քվեարկել ՔՊ թեկնածու Արգիշտի Մեխակյանի օգտին: Ընդ որում՝ հատուկ ընդգծենք, որ նախընտրական փուլում Մեխակյանը խուսափել է այս թեմայով խոսելուց եւ բավականին բալանսավորված քարոզարշավ է տարել՝ Եկեղեցու հետ իշխանությունների հարաբերությունների մասով, անգամ տողատակերում հասկացրել է, որ ինքը Եկեղեցու դեմ արշավը չի ողջունում: Ընտրություններին իր ստացած 15 հազար 296 ձայների մեծ մասն էլ Մեխակյանը ստացել է հայրենի Խոյ համայնքն ընդգրկող 16 գյուղերից: Հիշեցնենք, որ Մեխակյանը նախկինում Խոյի ղեկավարն էր, որն ընտրություններից առաջ միացրին Էջմիածնին: Փոխարենը «Հաղթանակ» դաշինքի թեկնածու Սեւակ Խաչատրյանը Էջմիածին քաղաքում հաղթել է Արգիշտի Մեխակյանին՝ այստեղից ստանալով իր ձայների 70 տոկոսը՝ 7 հազար 64 ձայն: Այս պարզ թվաբանությունը բավական է՝ հասկանալու համար, որ Էջմիածինը Եկեղեցու դեմ իրենց գործողություններին կողմնակից չէ, եւ դա նրանց գրպանը գցել չի հաջողվելու:

Միակողմանի սեր

Շատ մեծ խելք պետք չէ՝ ընտրություններ կեղծելու եւ ցանկալի արդյունք գրանցելու համար: Բայց բավականին մեծ անբարոյականություն է պետք՝ իշխանությունից ատամներով կառչելու, այդ իշխանությունը պահելու համար: Մեծ աներեսություն է պետք՝ ժողովրդի մերժող շնչառությունը սեփական թիկունքին զգալու պայմաններում ցանկացած միջոցի դիմելով նրա ցանկությանը դեմ գնալու համար: Ոչ մեկիս մտքով չէր անցնի 2018-ին, որ նախկիններին մերժելու ճանապարհով իշխանության եկած այս երիտասարդները կարճ ժամանակ անց կմոռանան ժողովրդի սիրո, մաքուր ընտրությունների, վարչական ռեսուրս չկիրառելու, ցանկացած իշխանության՝ ճիշտ ժամանակին հեռանալու մասին իրենց բոցաշունչ ճառերը եւ կյանքի գնով կպահեն իշխանությունը: Կպահեն խայտառակ պարտությունից, աններելի կորուստներից, բոլոր ուղղություններով ձախողումներ արձանագրելուց հետո անգամ: Ոչ միայն կպահեն, այլեւ իրենց քաղաքական հակառակորդներին բանտ կնետեն ու պատանդ կպահեն, իրավապահ համակարգն ու դատարանները կծառայեցնեն իրենց շահերին, օրենքն իրենց ուզած ձեւով կվերաձեւեն, կվախեցնեն ու կճնշեն, կխաբեն ու կմանիպուլացնեն հանրությանը, միայն թե մնան գահին: 7-8 տարում պարզվեց, որ նրանք այնքան են սիրել իրենց պաշտոններն ու պետական բյուջեից անաշխատ եկամուտներ ստանալու հնարավորությունը, որ պատրաստ են անգամ արյուն թափել, միայն թե մնան երկրի ղեկին: Եվ հանուն դրա պատրաստ են մինչեւ վերջին պտուտակը քանդել այս պետության ողնաշարը՝ Սահմանադրություն փոխել, Եկեղեցին ավիրել, նոր հողեր հանձնել, միջանցք տալ, թույլ տալ, որ Բաքվում մեր հայրենակիցներին տանջամահ անեն: Ոչ մի կարմիր գիծ, ոչ մի սահմանափակում, ոչ մի բարոյական արգելք: Մենք ձեզ սիրում ենք, մենք ուզում ենք ձեզ իշխել, նույնիսկ եթե դուք ատում եք մեզ:

ՀԱՅԱՍՏԱՆ

ԱԺ «Հայաստան» խմբակցությունը Հայաստանում քաղբանտարկյալների եւ նրանց իրավունքների վերականգնման մասին հայտարարության նախագիծ է շրջանառության մեջ դրել: Արձանագրել են Հայաստանում ժողովրդավարության հետընթացը, «որի բաղկացուցիչ մասն են կազմում խոսքի, խղճի, հավաքների ազատությունների կոպիտ ոտնահարումները, ՁԼՄ-ների հանդեպ ճնշումները, շինծու քրեական գործերը՝ քաղաքական այլ հայացքներ ունեցող գործիչների նկատմամբ, ընտրովի արդարադատությունը, կոռուպցիայի ահագնացող մակարդակը...»: Իշխանությունը, ըստ ընդդիմության, վերածվել է քաղաքական հետապնդումների, հալածանքների եւ հաշվեհարդարի բացահայտ գործիքի: Հայտարարությունում հիշեցնում են, որ կալանք են կրում ու դատապարտվել են հոգեւոր սպասավորներ, զոհված զինծառայողների հարազատներ, ընդդիմադիր քաղաքական գործիչներ, բարեգործներ, Արցախի պատգամավորներ, ՏԻՄ ներկայացուցիչներ եւ այլք: Եվ վստահեցնում են, որ վերը թվարկված բոլոր անձինք ԵԽԽՎ սահմանված չափանիշներով քաղբանտարկյալներ են, որոնց ազատազրկումն իրականացվել է բացառապես քաղաքական դրդապատճառներով:

ՈՐՈՇ ԸՆԴԴԻՄԱԴԻՐՆԵՐ ԱՎԵԼԻ ՄԵԾ ՑՆԾՈՒԹՅԱՄԲ ՔՊ-Ի ՀԱՂԹԱՆԱԿՆ ԸՆԴՈՒՆԵՑԻՆ, ՔԱՆ ԻՐԵՆՑԸ ԿԸՆԴՈՒՆԵԻՆ

Նոյեմբերի 16-ին իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը Վաղարշապատ խոշորացված համայնքում հաղթեց:

Քաղաքագետների, քաղաքական գործիչների կարծիքով՝ այս հաղթանակից հետո Նիկոլ Փաշինյանն ավելի վճռականորեն է գրոհելու Վեհարանի եւ Գարեգին Բ-ի դեմ: Երեկվանից բոլորին մեկ հարց է մտատանջում. ինչպե՞ս ՔՊ-ն հաղթեց, եթե մասնավոր զրույցներում մարդիկ իրենց հիասթափությունն ու դժգոհությունն են հայտնում Նիկոլ Փաշինյանից

Էջը՝ Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

ու ՔՊ-ից, հետո գնում ընտրում են նրանց: Քաղաքագետ **Բենիամին Մաթեւոսյանը**, «Հրապարակի» հետ զրույցում անդրադառնալով Արգիշտի Մեխակյանի հաղթանակին, դրա պատճառներին եւ հետեւանքներին, նաեւ՝ ընդդիմության թերացումներին, նկատեց. «Որպեսզի մեր զրույցը լինի առավել առարկայական, պետք է թվեր նշենք: Ի՞նչ են ասում իշխանությունները, նրանք պնդում են, որ «ջախջախիչ հաղթանակ» են տարել, բայց ի՞նչ են վկայում թվերը: ՔՊ-ն ստացել է 15 հազար 298 ձայն, ընդդիմությունը ստացել է 14 հազար 553 ձայն: Այսինքն՝ ՔՊ-ն հաղթել է 800 եւ մի քանի ձայնի տարբերության արդյունքում: Ինչպես տեսնում ենք՝ քվեների տարբերությունը զգալի չէ. սա առաջին փաստն է՝ իշխանական նարատիվները քանդելու համար:

Ի՞նչ արեց իշխանությունը վերջին ամիսներին: Պետք է լինենք անկեղծ, իշխանությունը քաղաքականապես բավականին ճկուն քայլեր կատարեց: Փարաքարի եւ Գյումրու ընտրություններից հետո նրանք որոշակի հետեւություններ արեցին եւ անցան գործի: Ընդամենը մի քանի ամիս առաջ Վաղարշապատ համայնքին միացրին Խոյ համայնքը: Հենց «Հրապարակ» օրաթերթը մի հրապարակում էր արել նոյեմբերի 17-ին, որ եթե ընտրությունները լինեին բացառապես Էջմիածին քաղաքում, ապա Սեւակ Խաչատրյանը հաղթելու էր: Փաստացի՝ ՔՊ-ն Վաղարշապատ քաղաքում պարտվել է ընդդիմությանը, սակայն Խոյ համայնքի քվեարկությունների շնորհիվ հաջողությունների հասավ: Բավականին տրամաբանական քայլ արեցին՝ Խոյը միացնելով Էջմիածնին:

Շատ կարեւոր է նաեւ ֆիքսել մի բան. Արգիշտի Մեխակյանը փորձում էր ամեն կերպ դիստանցիա պահել ՔՊ-ից: Այսինքն՝ ընտրությունները փորձեցին այնպես ներկայացնել, որ տպավորություն ստեղծվեց, թե թաղի լավ տղայի ընտրություն է, ինչը ես ո՛չ կասկածի տակ եմ դնում, ո՛չ էլ հեգնում եմ: Իրողությունն եմ ասում: Փաշինյանը բնից չհանեց գլուխը, քարոզարշավին էլ չգնաց, ոչ մի խոսք չասաց: Եթե ես չեմ սխալվում, ապա Հանրային հեռուստաընկերության բանավեճի տաղավարում Արգիշտի Մեխակյանը պնդել էր, որ վերջին ամիսներին մոտ կես միլիարդ դրամի սուբվենցիոն ծրագրեր են իրականացվել Վաղարշապատում: Այստեղ ամեն ինչ շատ պարզ է, համայնքը խոշորացրին, անգամ Փաշինյանի նկարը չցուցադրեցին քաղաքացիներին, վարչական ռեսուրսն էլ մաքսիմալ կերպով օգտագործեցին, սակայն անգամ այդ դեպքում հավաքական ընդդիմությունից կարողացան ավել հավաքել ընդամենը 800 ձայն: Իշխանության հաջողության ողջ գաղտնիքը սա է:

Այժմ խոսենք ընդդիմության մասին: Հայտնի հռետորն ասում էր. «Նիկոլը ճիշտ էր, ես սխալվեցի»: Հիմա ժամանակն է ասելու, որ Ռոբերտ Քոչարյանն էր ճիշտ, իրենք բոլորով միասին սխալվեցին: Քոչարյանն իր վերջին ասուլիսի ժամանակ ասում էր, որ ճիշտ կլինի, եթե ընդդիմադիր դաշտում լինի երեք խոշոր խաղացող, որոնք կկարողանան կազմել կոալիցիա: Եթե այս ամենը թարգմանենք, ապա նշանակում է, որ առնվազն երեք ճակատով ընդդիմությունը պետք է դուրս գա պայքարի: Առնվազն երեք խոշոր կենտրոն պետք է լինի, եւ ամեն մեկը մյուսի դեմ քարոզչություն չանելով, իր խրամատում պետք է պայքար սկսի: Այժմ մենք ականատես եղանք, որ «Հաղթանակ» դաշինքն ինքն իրենով հաղթանակ տարավ: Սեւակ Խաչատրյանը տարավ ավելի շատ ձայն, քան նախորդ ընտրություններում Դիանա Գասպարյանը:

Ինչպես տեսանք՝ «Մայր Հայաստանն» ինչպես Գյումրիում, այնպես էլ Վաղարշապատում կարողացավ ապահովել իր ներկայությունը, սակայն այդ երրորդ ուժի գործոնը, որպես այդպիսին, բացակայում էր: Պատկերացրեք այս նույն պատկերը, սակայն ընտրություններին մասնակցեր նաեւ Սամվել Կարապետյանի ուժը, պատկերը լրիվ այլ կլիներ: Մեկ կարեւոր հանգամանք նույնպես. կա կարիք՝ ընդդիմադիր քաղաքական ուժերի խոշորացման: Այս ընտրությունը դրա վառ ապացույցն էր: Եթե մի շարք այլ քաղաքական ուժեր՝ ավելի փոքր ուժերի մասին է խոսքը, միավորված լինեին, ապա դաշինքների համար նախատեսված շեմը կլիներ հաղթահարելի, սա՝ արդեն հետընտրական փուլում: Իշխանությունների համար սա սպասելի կենաց-մահու կռիվ էր, իսկ ընդդիմությունը լավ աշխատեց, թե՞ ոչ, ես կասեմ հետեւյալը՝ նրանք ունեն որոշակի հետեւություն անելու խնդիր, սակայն ասել, որ իշխանությունը ջախջախիչ հաղթանակ արձանագրեց, կամ ընդդիմությունը ջախջախիչ պարտվեց, կլինի մեծ չափազանցություն, եւ ես զերծ կմնամ նման գնահատականներից: Սա քաղաքական պայքար է՝ 2026-ից առաջ, որի քաղաքական կոնտուրները երեկ տեսանք: 2026 թվականի արդյունքները կախված են այսօրվանից: Նայած թե ընդդիմությունն իր տնային աշխատանքները հիմա ինչպես կկատարի: Գյումրիում տեղի ունեցավ իշխանափոխություն, Ալավերդիում տեղի ունեցավ իշխանափոխություն, Փարաքարում տեղի ունեցավ իշխանափոխություն, եւ այդ ամենից իշխանությունը մեծ հետեւություններ արեց, ինչն ակնհայտ է: Եթե ինչ-որ մարդիկ սա հրաժարվում են ընդունել, փորում են սեփական գերեզմանը: Չգիտես ինչու, որոշ ընդդիմադիրներ, իրենց վրա աշխատելու փոխարեն, ավելի մեծ ցնծությամբ ՔՊ-ի հաղթանակն ընդունեցին երեկ, քան կարող էին իրենց հաղթանակն ընդունել»:

ԴՐԱՆՔ ՏԱՐԲԵՐ ԿԼԱՍԻ ԿԻՍԱՋԵԲԿԻՐՆԵՐ ԵՆ՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԱՏՆԵՐԻՑ ԳՐԱՆՏՆԵՐ ՍՏԱՑՈՂ

Արեւմտամետության գաղափարը Հայաստանում սպասվածից էլ կարճ կյանք ունեցավ, եւ չնայած հայ հանրությունն առանձնապես աչքի չի ընկնում ռուսամետությամբ եւ Ռուսաստանին չի համարում վստահելի դաշնակից, սակայն համեմատության մեջ փաստացի մարդիկ սկսել են ավելի շատ հույսեր կապել հայ-ռուսական դաշնակցային հարաբերությունների հետ, քան հայ-ամերիկյան, հայ-եվրոպական: Իրականում մեր հանրությանը երբեմն չափից ավելի ենք թերագնահատում եւ կարծում ենք, որ մարդիկ, մեծ հաշվով, չեն հասկանում, թե աշխարհում ինչ է կատարվում, սակայն վերջին մի քանի ՏԻՄ ընտրությունները եւ, այսպես կոչված, արեւմտամետ ուժերի պարտությունը ցույց են տալիս մի բան, որ հայ ժողովուրդը շատ չի հավատում ԱՄՆ-ի եւ ԵՄ-ի հետ հարաբերությունների հեռանկարին, իսկ Ռուսաստանի Դաշնությանը վերաբերվում է, ինչպես հայտնի ժողովրդական առածն է ասում, «չեղած տեղը կաղամբն էլ է միրգ» սկզբունքով:

Վաղարշապատում՝ Արամ Սարգսյանի «Հանրապետություն», Գյումրիում «Եվրադաշինք» ուժերն այդպես էլ չկարողացան անցողիկ շեմը հաղթահարել եւ անցնել ավագանի: Այն դեպքում, երբ Գյումրիում արեւմտամետ ուժերը մեծ դաշինքով էին մասնակցում, ենթադրվում էր, որ կարող են գոնե անցողիկ շեմը հաղթահարել, սակայն, ինչպես տեսնում ենք, հասարակությունը նրանց չի վստահում. մի մասը նույնացնում է Նիկոլ Փաշինյանի հետ, մի մասն էլ անիմաստ ու անհեռանկարային է համարում աջակցել մի ուժի, որը Հայաստանի ապագան տեսնում է այն պետությունների հետ, որոնք Հայաստանի վրա թքած ունեն այժմ:

Նախկին պատգամավոր, քաղաքական գործիչ **Նաիրա Զոհրաբյանը**, «Հրապարակի» հետ զրույցում անդրադառնալով թեմային, նկատեց. «Մեր ժողովրդն Արեւմուտք եւ արեւմտամետություն ասելով հասկանում է, որ շուտով վիզայի ազատականացում է լինելու, թեպետ չեն էլ պատկերացնում, թե դա ինչպես է լինում, սակայն մտածում են, որ առանց վիզայի գնալու են Եվրոպա, տարբեր երկրներ, տարբեր նպատակներով: Մեր ժողովրդի համար արեւմտամետությունը դա է: Այս մասին են վկայում նաեւ սոցհարցումները: Արեւմտամետություն ասելով, մեր ժողովուրդը պատկերացնում է հետեւյալը՝ գնալ Եվրոպա, աշխատանք գտնել, բարձր թոշակ ստանալ: Արեւմտամետություն ասելով, մարդիկ եվրոպական կրթական, բժշկական համակարգերն են հասկանում: Արեւմուտք ասելով՝ հայ հանրությունը բացարձակ չի ընկալում այն արժեհամակարգերը, որոնք իբր արեւմտյան քաղաքակրթություն են քարոզում: Նույն Արամ Զավենի Սարգսյանը երբ վարչապետ էր, ռուսամետության ամենամեծ քարոզիչներից էր: Հայաստանում իրապես արեւմտյան քաղաքակրթություն կրող ուժեր չկան: Դրանք, քաղաքական կոնյունկտուրայից ելնելով, տարբեր կլասի տարբեր կիսաջեբկիրներ են, ովքեր տարբեր եվրոպական դեսպանատներից դրամաշնորհներ են ստանում: Սա այն տեսակն է, որը չնչին փոփոխության դեպքում փոխում է իր գաղափարները եւ արագությամբ դիրքավորվում մյուս բեւեռում:

Ինչպես տեսնում ենք, երբ ընտրության պահը գալիս է, հայ ժողովուրդը չի ընտրում այն ուժերին, ովքեր ներկայանում են արեւմտամետ: Ինչու, որովհետեւ այս ուժերը չեն նույնականացվում արեւմտամետության հետ, առնվազն այն տեսանկյունից, որն ունի մեր ժողովուրդն արեւմտամետության մասին: Մարդիկ երբեք չեն ընտրելու Արամ Սարգսյանին, չեն ընտրելու Խզմալյանին եւ մյուսներին, որոնց անուններն անգամ չեմ մտաբերում: Մարդիկ Արեւմուտք ասելով, նկատի ունեն վիզայի ազատականացում, եվրոպական բժշկական, կրթական համակարգեր: Այս ամենը, սակայն, հանրությունը չի կապում հայաստանյան արեւմտամետ ուժերի հետ: Երբ գալիս է ընտրության պահը, մեր ժողովուրդը բավականին պահպանողական է դառնում: Ռեալ են դատում, նաղդը թողած՝ մարդիկ չեն գնում նիսյայի ետեւից: Բոլորն էլ գիտակցում են, որ եթե Ռուսաստանը փակի Լարսը, Հայաստանը կմնա սոված: Ուստի ինչքան էլ որ մարդկանց գլուխը լցնեն, որ ռուսները մեր թշնամին են, միեւնույն է, մարդիկ չեն հավատում դրան: Թեպետ մի շրջան կար, որ հակառուսականությունը կատաստրոֆիկ աստիճանի էր հասել, սակայն այդ ամենն այդպես էլ չնյութականացավ եւ չդարձավ քվե՝ ընդդեմ ՌԴ-ի: Վաղը, երբ լինեն ընտրություններ, արեւմտամետ ուժերը նույն պատկերն են արձանագրելու, որովհետեւ Արեւմուտքից սպասումները մարդիկ չեն կապում այն կուսակցությունների հետ, որոնք հանդես են գալիս արեւմտականության դիրքերից: Մեր հանրությանը չի հետաքրքրում եվրոպական արժեհամակարգը, չեն հետաքրքրում մարդու իրավունքները, փոքրամասնությունները, խոսքի ազատությունը եւ այլն»:

ԷՋՄԻԱԾԻՆ

ԻՇԽՈՂ ԹԻՄԻ ԿԵՂԾ ՅՆԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՅՈՒՄՐՈՒ ԴԱՍԵՐԸ

Վաղարշապատի արտահերթ ընտրություններից հետո իշխանությունը ցնծության մեջ է, կեսգիշերն անց՝ մի կերպ կորզված հաղթանակի մասին իմանալուց հետո, հոգեւոր մայրաքաղաքի փողոցներում դիոլզուռնա էր հնչում, երեկ էլ այդ քեֆ-ուրախությունը տեղափոխվել էր Ֆեյսբուք: Փաշինյանի թամադայությամբ, թիմը առավոտ կանուխ գործի էր անցել: «Ուռա, դե կերեք, ջախջախիչ հաղթանակ ենք տարել» ոճում ՔՊ-ականները, իրար հերթ չտալով, «վերլուծում-արձանագրում էին» կատարվածը՝ եզրահանգելով, թե ժողովուրդը զորավոր է, ժողովուրդը մերժում, ջախջախում է նախկին թալանչի կլաններին, այդ թվում ընդգծելով բարերար Սամվել Կարապետյանի՝ մերձեւովականներին, որոնք չէին մասնակցում Վաղարշապատի ընտրություններին: Մինչդեռ իրականում ՔՊ-ականները հոգու խորքում հասկանում են, որ հրճվելու մեծ առիթներ չունեն: Նախ, որովհետեւ ընդդիմության միայն մի մասն էր մասնակցել այդ ընտրություններին, իսկ Կարապետյանի թիմակիցների մասնակցությունը կարող էր բոլորովին այլ վիճակ ստեղծել, եւ ընդհանրապես՝ խոշոր հաշվով, ՔՊ-ին ձայն է տվել 15 հազար 298 ընտրող, հավաքական ռադիկալ ընդդիմությանը՝ 13 հազար 835, որի տարբերությունն ընդամենը մոտ 1500 է:

Ուստի իշխող թիմում մեզնից լավ գիտեն, որ Վաղարշապատը 2026 թվականի համապետական ընտրությունների նախերգանքը չէ, ինչպես իրենք եւ իրենց առաջնորդն են ներկայացնում, քանի որ, եթե այստեղ նախընտրական հնարքներով եւ մանիպուլյացիաներով կարողացան ձայներ կորզել՝ չհաշված վարչական ռեսուրսի կիրառումը, ապա համապետականին, ուզենչուզեն, սեփական դեմքով են մասնակցելու, եւ տեղի է ունենալու քաղաքական ընտրություն՝ Արցախը հանձնածների եւ չհանձնածների միջեւ, իսկ ամիսներ առաջ Գյումրիում նման ընտրությունները ցույց տվեցին, թե ինչ է լինում ՔՊ-ի հետ:

ԻՆՉ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ՎԱՂԱՐՇԱՊԱՏՈՒՄ

ԿԸՀ-ի փոխանցմամբ՝ քվեարկությանը մասնակցել է ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների 45.12 տոկոսը կամ 31 հազար 527 ընտրող: Ընտրություններին մասնակցում էր 8 քաղաքական ուժ՝ «Հայրենիք» կուսակցությունը, «Հաղթանակ» կուսակցությունների դաշինքը՝ «Առաջ» եւ ՀՅԴ կուսակցություններով, «Քաղաքացիական պայմանագիրը», «Ազատ դեմոկրատները», «Մայր Հայաստան» ազգային-դեմոկրատական, «Ժառանգություն», «Հանրապետություն», «Համահայկական ճակատ» կուսակցությունները: Նախնական արդյունքներով, համայնքի ավագանի է անցել երեք ուժ. ՔՊ-ն՝ մոտ 15 հազար ձայնով, «Հաղթանակ» դաշինքը՝ մոտ 10 հազարով, եւ «Մայր Հայաստանը»՝ 1700 քվեով: Թվում էր, թե մասնակցության առումով Վաղարշապատը գրեթե չի զիջում Գյումրուն կամ ընդամենը երկու տոկոսով է զիջում, եւ իշխանությունը պետք է նույն ճակատագրին արժանանար, ինչ Գյումրիում, սակայն քաղգործիչների, ընտրական մասնագետների եւ իշխող թիմում վերլուծությունների հանրագումարը եթե ի մի բերենք, ապա Վաղարշապատում ՔՊ-ի նոմինալ հաղթանակին մի քանի գործոն է նպաստել: Նախ՝ ՔՊ-ում էլ գիտեն, որ Արմավիրը, ի տարբերություն Շիրակի, ամենաիշխանական մարզն է, վերջին ութ տարիներին ՔՊ-ն այստեղ միշտ բարձր թվեր է ունեցել, կամ, ինչպես իրենք են կատակում՝ սա Հայաստանի զոմբիլենդն է, իսկ դրանում իր ավանդն ունեցել են տեղի կարկառուն ՔՊ-ականները՝ նախկին մարզպետ Դավիթ Խուդաթյանը, որը ներկայում ՏԿԵ նախարարն է, եւ Արգիշտի Մեխակյանի ընտրական շտաբի պատասխանատուն, թե ինքը՝ թեկնածու Մեխակյանը, որի նկատմամբ մարդիկ դրական են տրամադրված՝ հաշվի առնելով նաեւ հերոս հոր անցած ուղին, իսկ Մեխակ Մեխակյանն Արցախն ազատագրողներից է եղել, Զեբրայիլն էլ նրա պատվին Մեխակավան են վերանվանել: Իհարկե, ՔՊ-ի ճամբարում հայտնվելուց եւ վերջին իրադարձություններից հետո շատերն են երես թեքել Մեխակյանից, բայց գյուղերում մարդկային ուրիշ փոխհարաբերություններ են, նրանց ոչ այնքան քաղաքական շահերն են հետաքրքրում, որքան մարդկային կապերը: Եվ ամենեւին էլ պատահական չէր, որ Փաշինյանն ամիսներ առաջ նախկին համայնքապետ Դիանա Գասպարյանին խաղից հանեց, ապա Էջմիածինը կրկին խոշորացրեց՝ նրան միացնելով Խոյ համայնքը՝ իր 16 գյուղերով, Մեխակյանն էլ տարիներ շարունակ Խոյի համայնքապետն է եղել, եւ գյուղերում ինքն է վարչական ղեկավարներ նշանակել, որոնք էլ այս ընտրություններին «վիզ են դրել» իր հաղթանակի համար՝ ժողովրդին համոզել են, որ իրենք կապ չունեն ոչ Փաշինյանի, ոչ ՔՊ-ի հետ, իրենք իրենց տղուն են ձայն տալիս, որը լավ գործեր է արել ու դեռ կանի իրենց համար: Ասվածի ապացույցն էլ այն է, որ Մեխակյանն իր ձայների առյուծի բաժինը տարել է գյուղերից, իսկ բուն Էջմիածնում պարտվել է Սեւակ Խաչատրյանին՝ հավաքելով մոտ 6 հազար 800 ձայն՝ գլխավոր մրցակցից 2 հարյուրով պակաս:

Ակնհայտ է, որ ՔՊ-ն նաեւ «դասեր» էր քաղել Գյումրու ընտրություններից եւ փորձեց ընտրարշավի ժամանակ ամեն բան անել, որ Մեխակյանը տարանջատվի ՔՊ-ից, պատահական չէ, որ նրա քարոզչական պաստառներից բացակայում էր կուսակցության անվանումը, նշված էին միայն քվեաթերթիկում նրա թիվը, անուն-ազգանունը, իսկ ՔՊ ձեռքսեղմման լոգոն փոքրիկ նշումով էր:

Ի տարբերություն Գյումրու, Նիկոլ Փաշինյանը չգնաց Էջմիածին, բորբոքված ու ինքնամոռաց ելույթ չունեցավ «ռենջռովերներն» ու «բրաբուսները» հատիկ-հատիկ հետ բերելու մասին, չսրեց ընտրարշավը քաղաքական ելույթով՝ թողնելով, որ Մեխակյանի գործոնն առաջ մղվի: Մյուս կողմից՝ ընդդիմությունն էլ լուրջ չվերաբերվեց Վաղարշապատի ընտրություններին, հատուկենտ ուժերից բացի, մյուսներն անգամ քարոզարշավ չէին անում՝ իմանալով Արգիշտի Մեխակյանի՝ գյուղերում ունեցած քվեների մասին: Ոմանք էլ ընդամենը օլիմպիական մասնակցություն ապահովեցին՝ ակամայից նպաստելով ՔՊ հաղթանակին: Եվ առնվազն 2 կեղծ ուժ իշխանությունը մտցրեց խաղի մեջ, որոնք ձայներ փոշիացրին, եւ հենց փոշիացած ձայների շնորհիվ էլ 48 տոկոս ձայն ստացած ՔՊ-ն, Դոնթի բանաձեւի հաշվարկով, մոտ 58 տոկոս ստացավ՝ ավագանիում ունենալով 19 մանդատ: Ընդդիմադիրները միասին կունենան 14 մանդատ. 12-ը՝ «Հաղթանակ» դաշինքը, 2-ը՝ «Մայր Հայաստանը»:

Ինչեւէ, իշխանական շրջանակներում լավ են հասկանում, որ 2026 թվականի ընտրություններն այլ տրամաբանության մեջ են լինելու, մանավանդ՝ եթե դրանց մասնակցի նաեւ Սամվել Կարապետյանի քաղաքական թիմը: Իսկ այսօր ցնծում են, որ հոգեբանական տեռոր գործադրեն եւ իրենց հեռանալը երազող մարդկանց հուսահատեցնեն՝ հետ պահելով առաջիկա ընտրություններին մասնակցելուց, որովհետեւ ցածր մասնակցության դեպքում շահում է իշխանությունը: Ի դեպ, 2021-ի համապետական ընտրություններին ՔՊ-ն այս համայնքներում 18 հազարից ավելի ձայն է հավաքել, այժմ՝ ավելի քան 3 հազարով պակաս:

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՉԸՆՏՐՎԵԼՆ ԱՆԳԱՄ ՉՐԵՏԱՊՆԴՎԵԼՈՒ ԵՐԱՇԽԻՔ ՉԷ

Նախօրեին, երբ պարզ դարձավ, որ ՔՊ-ն հաղթել է Վաղարշապատում եւ հավաքական ընդդիմությունից մի հազար ձայնի չափ ավել է տարել, մարդիկ սկսեցին «ողբասացությունը», թե սա նշանակում է, որ իշխանափոխության հույսերը փոքր են, որ սա 2026-ի ընտրությունների մինի մոդելն էր, եւ ՔՊ-ն, ըստ էության, գործարկեց նոր մեթոդներ եւ քաղտեխնոլոգիաներ, թե ինչպես ադմինիստրատիվ ռեսուրսի ու ճնշումների միջոցով վերընտրվել: Տարբեր գնահատականներ եւ վերլուծություններ արվեցին: Ոմանք սկսեցին բացահայտել, որ դա այնքան էլ հաղթանակ չէր, եւ այդքան փող ու ռեսուրս ծախսելու պարագայում այդ 150 հազար բացարձակ ձայները, որ ստացել է ՔՊ-ն, այնքան էլ կուսակցության ձայները չեն, որքան անձամբ Արգիշտի Մեխակյանի ձայներն են, որն ամեն ինչ արեց, որ նախընտրական փուլում տարանջատվի «Քաղպայմանագրից», եւ խուսափեց Եկեղեցու դեմ արշավի թեմայով որեւէ բան ասել, հակառակը՝ անգամ հասկացնում էր, որ դա իր սրտով չէ: Եվ ինչպես նման իրավիճակներում լինում է, նաեւ հումորի, մեմերի շարք հայտնվեց համացանցում: Օրինակ, ոմանք սկսեցին գրել, որ մենք խուսափեցինք հերթական քաղբանտարկյալն ունենալու հեռանկարից՝ ակնարկելով, որ եթե Սեւակ Խաչատրյանն ընտրվեր, ապա հայտնվելու էր բանտում՝ Դավիթ Համբարձումյանի եւ Վարդան Ղուկասյանի կողքին, քանի որ Նիկոլ Փաշինյանն առանց աչք թարթելու ընտրված համայնքապետերին բերդ է ուղարկում եւ իշխանությունը տվյալ համայնքում զավթում: Բայց պարզվեց, որ վաղաժամ էին սկսել ուրախանալ, որովհետեւ անգամ չհաղթելը չփրկեց «Հաղթանակ» դաշինքի ներկայացուցիչներին ապօրինի հետապնդումներից:

Երեկոյան արդեն տեղեկացանք, որ Հակակոռուպցիոն կոմիտեն մտել է դաշինքի անդամներից մի քանիսի տները՝ խուզարկությունների: Այդ պահի դրությամբ խուզարկում էին Կարեն Գեւորգյանի, Արմեն Դավթյանի, Մայիս Մելքոնյանի, Տիգրան Գեւորգյանի բնակարանները: Լուրեր կային, որ մտնելու են նաեւ դաշինքի առաջին համարի՝ Սեւակ Խաչատրյանի տուն: Ավելին՝ չնայած շուրջ երկու ժամ խուզարկում էին մարդկանց տները, սակայն նրանց շրջապատի անձանց, մտերիմներին հայտնի չէր, թե ինչ վարույթի շրջանակներում են տեղի ունենում քննչական գործողությունները, ինչ են փնտրում նրանց բնակարաններում քաղաքական հետապնդումների գործիք դարձած քննիչները: «Հաղթանակ» դաշինքի նախընտրական շտաբի պատասխանատու Հրանտ Ավետիսյանը մեզ ասաց, որ սպասում են փաստաբաններին, որոնք արդեն շտապում են էջմիածինցիների տները, գուցե քննիչները նրանց հայտնեն, թե ինչ եւ ինչու են խուզարկում: Հակակոռուպցիոն կոմիտեից էլ մեր հարցին ի պատասխան հայտնել էին. «ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննվող քրեական վարույթների շրջանակներում իրականացվում են ապացուցողական եւ վարութային այլ գործողություններ: Անհրաժեշտության դեպքում կտրամադրվի լրացուցիչ տեղեկատվություն»:

Այնպես որ, նույնիսկ չընտրվելը փրկություն չէ, եւ ռեպրեսիվ մեքենան աշխատում է բոլոր ընդդիմադիրների նկատմամբ: Թերեւս այն հաշվարկով, որ մարդկանց վախեցնեն, եւ նրանք հրաժարվեն պայքարից ու իշխանափոխություն իրականացնելու մտքերից:

Արեգ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԱԴՐԲԵՋԱՆԸ ԴԱՏՈՒՄ Է ԱՄԲՈՂՋ ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ԳԵՐԻ

«Դրապարակի» զրուցակիցն արգենտինահայ փաստաբան, Տուկումանի համալսարանի ցեղասպանության ուսումնասիրությունների պրոֆեսոր եւ Բուենոս Այրեսի Սենատի թեկնածու **Լուսիանա Մինասյանն** է, որը զբաղվում է տուժած հայերի շահերի պաշտպանությամբ:



- Ադրբեջանցի մեղադրողը պահանջել է ցմահ ազատազրկման դատապարտել Արցախի ռազմաքաղաքական 5 ղեկավարներին՝ նախկին նախագահ Արայիկ Հարությունյանին, ՊԲ նախկին հրամանատար Լեւոն Մնացականյանին, ԱԺ նախագահ Դավիթ Իշխանյանին, ՊԲ հրամանատարի նախկին տեղակալ Դավիթ Մանուկյանին եւ նախկին ԱԳ նախարար Դավիթ Բաբայանին: Բակո Սահակյանի եւ Արկադի Ղուկասյանի դեպքում պահանջել են 20 տարվա ազատազրկում՝ նրանց տարիքով պայմանավորված: Իհարկե, այս ամբողջ շինծու դատավարության ելքը զարմանալի չէ, բայց արդյո՞ք հնարավոր է դեռ ողջուառողջ վերադարձնել հայ գերիներին՝ անկախ ՀՀ իշխանությունների խոսույթից:

- Չնայած ծայրահեղ դժվարին իրավիճակին, ես չեմ կարծում, որ Ադրբեջանը մտադիր է ֆիզիկապես վնասել հայ գերիներին: Մինչեւ 2025 թվականի սեպտեմբերի 2-ը Կարմիր խաչը պահպանել է նրանց հետ կապվելու հնարավորություն, եւ այդ հասանելիությունը կարող էր տրամադրվել միայն միջազգային մարդասիրական իրավունքով պաշտպանված անձանց կարգավիճակի, այսինքն՝ ռազմագերիների կարգավիճակի հիման վրա: Կազմակերպության ներկայությունը եւ գործունեությունը գործնականում հաստատել են այս կարգավիճակը: Կարմիր խաչի հետագա վտարումը, թեեւ խորապես մտահոգիչ է, հետադարձ կերպով չի փոխում նրանց պաշտպանության բնույթը Միջազգային մարդասիրական իրավունքի համաձայն. այն միայն վերացնում է նրանց վիճակի մոնիթորինգի միակ անկախ մեխանիզմը: Այս օրինաչափությունն աննախադեպ չէ: Վիգեն Էուլջեքջյանի գործում նրա մեղադրանքի հիմնական հիմքը հիմնված էր Մարալ Նաջարյանի կողմից՝ ձերբակալման ժամանակ արված հայտարարությունների վրա. հայտարարություններ, որոնք նա հետագայում հրապարակավ ասաց, որ ձեռք են բերվել ճնշման ներքո եւ չեն արտացոլում իրական պատմությունը: Այս նախորդ գործը ցույց է տալիս ավելի լայն համակարգային խնդիր այն մասին, թե ինչպես են նման ցուցմունքները ստացվում եւ օգտագործվում ադրբեջանական դատական վարույթներում: Այս գործոնները, միասին վերցված, ամրապնդում են այն գնահատականը, որ ընթացիկ դատավարությունները չունեն պատշաճ դատավարության երաշխիքներ, հիմնված են կասկածելի ապացույցների վրա եւ ծառայում են քաղաքական, այլ ոչ թե իրավական նպատակների: Այնուամենայնիվ, գերիների կյանքը մնում է արժեքավոր բանակցային գործիք Ադրբեջանի համար, ինչը զգալիորեն նվազեցնում է ֆիզիկական վնասի հավանականությունը՝ չնայած ԿԽՄԿ-ի բացակայությանը: Իրավիճակը մնում է ծանր, բայց այս նկատառումները որոշակի հիմքեր են տալիս՝ կարծելու, որ նրանց ֆիզիկական անվտանգությունն անմիջական վտանգի տակ չէ:

- Փաշինյանը նրանց վերադարձի նախապայման է նշում Ադրբեջանի հետ կայուն եւ երկարատեւ խաղաղության հաստատումը: Ալիեւը, իր հերթին, հին «հաշիվներ» ունի Բաքվում ապօրինի կալանքի տակ գտնվող հայ գործիչների հետ: Եթե աղոտ հույս ունենանք, արդյո՞ք մինչեւ դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը հնարավոր է միջազգային լուրջ ճնշում գեներացնել:

- Ադրբեջանական կողմը ներկայացրել է ենթադրյալ վկաների եւ «զոհերի» ներկայացուցիչների ճնշող մեծ թիվ, սակայն նույնիսկ մակերեսային ուսումնասիրությունը պարզ է դարձնում, որ այդ ցուցմունքներից շատերը, կարծես, կապ չունեն մեղադրյալների կամ վիճելի իրադարձությունների հետ: Բազմաթիվ մեղադրյալներ արդեն ներկայացրել են միջնորդություններ՝ խնդրելով դատարանին անտեսել նախաքննության ընթացքում վերցված ցուցմունքները եւ դիտարկել միայն դատարանին անմիջապես տրվածները: Հիմնավորումն ակնհայտ է. կան լուրջ հիմքեր՝ ենթադրելու, որ նախկինում տրված ցուցմունքներից շատերը ստացվել են հարկադրանքի պայմաններում, այլ ոչ թե կամավոր:

- Ըստ էության, Արցախի նախկին պետնախարար, բարերար Ռուբեն Վարդանյանն էլ «անմխիթար» է համարում ստեղծված իրավիճակը՝ նկատի առնելով այն, որ վերջերս նա հրաժարվեց իր հերթական փաստաբանից: Դուք դեռ շարունակո՞ւմ եք Ձեր ջանքերը նրա եւ մյուս հայ գերիների շահերի պաշտպանության ուղղությամբ:

- Ռուբեն Վարդանյանի՝ իր փաստաբան Աբրահամ Բերմանից հրաժարվելու եւ հետագայում՝ միայն ավելի ուշ Ադրբեջանի կողմից նշանակված փաստաբանին ազատելու որոշումը կարող է նշանակել դիտավորյալ փորձ՝ վերահաստատելու, որ այս դատավարությունները բնույթով անօրինական են: Նման պայմաններում իրավաբանական ներկայացուցչությունը մերժելով՝ նա ընդգծում է, որ դատավարությունները շինծու, անօրինական եւ կամայական են, եւ որ դրանցով առաջնորդվելու ցանկացած փորձ՝ այնպես, կարծես դրանք հիմնված լինեն օրինականության վրա, ի վերջո անօգուտ է եւ զուրկ իրավական հիմքերից:

- Պարզ է, որ Բաքվում դատում են ոչ թե առանձին գործիչների, որոնք եղել են Արցախյան շարժման ակունքներում, ազատագրել են մեր կորուսյալ Արցախն ու նպաստել մեր սուրբ եզերքի շենացմանը, այլ դատապարտում են ամբողջ հայ ժողովրդի ազատագրական պայքարը, նվիրական երազանքները, ազգային ձգտումները՝ մեծ հաշվով միտումնավոր «նվաստացնելով» մեզ բոլորիս:

- Ես դեռեւս չեմ կարողանում գտնել ինձ համար համարժեք պատասխան, երբ մտածում եմ, թե ինչ չափանիշներ են կիրառվել 2023 թվականի սեպտեմբերի 20-ին եւ հաջորդող օրերին, երբ ձերբակալվել են Լեռնային Ղարաբաղի բարձրաստիճան զինվորականներ եւ քաղաքական գործիչներ: Նույնիսկ իր մեղադրանքներում Ադրբեջանը փորձում է մեղադրյալներին ներկայացնել որպես ձերբակալման պահին զինված անձինք՝ պնդելով, օրինակ, որ ոմանք կրել են AK-74 հրացաններ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ նրանցից մի քանիսը նախկինում ծառայել են Արցախի պաշտպանության բանակում եւ անվտանգության հետ կապված ռիսկերի են ենթարկվել Հաքարիի կամուրջը հատելիս, լիովին նորմալ կլիներ, որ նրանցից մի քանիսը որոշակի պահերին զենք ունենային: Այնուամենայնիվ, մյուս ձերբակալվածները վաղուց դադարել էին որեւէ կապ ունենալ ռազմական կառույցների հետ, բացի տարիներ առաջ պարտադիր զորակոչից կամ, առավելագույնը, 2020 թվականի իրադարձությունների ժամանակ սահմանափակ մասնակցությունից: Անկախ այս տարբերություններից, նրանցից բոլորը պաշտպանված են միջազգային մարդասիրական իրավունքով: Ոչ ոք չի կարող դասակարգվել որպես վարձկան, մեղադրանք, որը անհիմն է, քանի որ նրանցից յուրաքանչյուրը Հայաստանի քաղաքացի է եւ, հետեւաբար, չի կարող համապատասխանել վարձկանի իրավական սահմանմանը: Դավիթ Բաբայանի կոնկրետ դեպքում, ով քաղաքական գործիչ է եւ չունի որեւէ գործառնական դեր պաշտպանության մարմիններում, Ադրբեջանի մտադրությունը, կարծես, նմանապես նախապես որոշված է: Նրա ձերբակալությունը, ինչպես մյուսների դեպքում, կարծես թե պայմանավորված է քաղաքական դրդապատճառներով, այլ ոչ թե որեւէ հավաստի իրավական հիմքով: Բաքվում տեղի ունեցողը անվիճելիորեն հստակեցնում է, որ այս դատավարությունները, իրականում ուղղված չեն ո՛չ առանձին գործիչների, ո՛չ էլ նրանց կոնկրետ գործողությունների կամ պատասխանատվության դեմ: Մեղադրյալներն անհատներ են, ովքեր կանգնած են եղել Արցախյան շարժման ակունքներում, նպաստել են Արցախի ազատագրմանը եւ կենտրոնական դեր են խաղացել դրա զարգացման մեջ: Նրանց համատեղ եւ խորհրդանշական կերպով թիրախավորելով՝ Ադրբեջանը, ըստ էության, դատի է տալիս ամբողջ հայկական ազգային պատմությունը: Այս մոտեցումը դատարանը վերածում է քաղաքական բեմի, որտեղ ազատագրական պայքարը, հայ ժողովրդի ձգտումները եւ Արցախի պատմական եւ մշակութային նշանակությունը՝ բոլորը, ապալեգիտիմացվում են: Սակայն մտադրությունը պարզապես հրապարակային նվաստացումը չէ: Ադրբեջանը ձգտում է Հարավային Կովկասում 30-ամյա ամբողջ հակամարտության ավելի լայն քաղաքական վերահիմնադրման՝ մի պատմություն, որտեղ այս հայ գործիչները վերաձեւակերպվում են ոչ թե որպես իրենց ժողովրդին պաշտպանող ազգային առաջնորդներ, այլ որպես հանցագործներ, որոնց գործողությունները ենթադրաբար արդարացնում են Բաքվի կողմից իրականացվող քաղաքականությունն ու արդյունքները: Այս իմաստով, նվաստացումը ծառայում է ավելի լայն ռազմավարության՝ պատմության, ինքնության եւ պատասխանատվության վերաիմաստավորմանը՝ այնպես, որ նվազեցնի հայ ազգային ձգտումները եւ ամրապնդի Ադրբեջանի քաղաքական պատմությունը ինչպես ներքին, այնպես էլ միջազգային լսարանի առջեւ:

- Առհասարակ, այս տարվա հունվարից՝ շինծու մեղադրանքներով շարունակվող դատական ֆարսն անցկացվում է առանց անկախ ԶԼՄ-ների մասնակցության, իսկ ամիսների կեղծ դատաքննությունը ցույց տվեց, որ անգամ ադրբեջանցիների տված ցուցմունքների հետ որեւէ կապ չունեն հայ ռազմագերիները: Ամբաստանյալի աթոռին հայտնված հայերին վերագրվող արարքները չեն ապացուցվել, հաճախ հնչել են նույնաբովանդակ ցուցմունքներ:

- Բաքվում անկախ լրատվամիջոցներ չկան: Լրատվամիջոցներն ակտիվորեն հետապնդվում են, կալանավորվում եւ դատարանի առաջ են կանգնում: Գրեթե 350 քաղբանտարկյալի գոյությունը հստակորեն ցույց է տալիս այս իրականությունը: «Աբզաս Մեդիա»-ի եւ TV-ի լրագրողների դեմ հարուցված գործերը լրացուցիչ ցույց են տալիս խոսքի ազատության համակարգված ճնշումը եւ քննադատական լրատվության ցանկացած ձեւի վերացումը: Նման պայմաններում ոչ մի միջազգային մարմնի, մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ոչ մի ՀԿ-ի եւ ոչ մի անկախ դիտորդի թույլատրված չէ մուտք գործել կամ վերահսկել իրավիճակը տեղում: Մենք լիովին գիտակցում ենք, որ դատական ֆարսը կշարունակվի, որ մեղադրյալները գրեթե անկասկած կստանան ցմահ ազատազրկման դատավճիռներ, եւ որ նրանք կտեղափոխվեն Գոբուստան կամ Ումբակի, ինչպես 2020 թվականին գերեվարված մյուս հայերը: Մենք հասկանում ենք այս իրադարձությունների ընթացքը: Այնուամենայնիվ, ինչպես Իսրայելը պահանջեց իր բոլոր պատանդների վերադարձը, մենք կշարունակենք պահանջել մեր 23 գերիներից յուրաքանչյուրի ազատ արձակումը՝ անկախ նրանից, թե նրանք մարտիկներ են, քաղաքացիական անձինք կամ քաղաքական առաջնորդներ: Նրանց ձերբակալության համար իրավական հիմք չկա: Նրանք պետք է ճանաչվեին որպես բռնի տեղահանված բնակչության մաս, ինչպես նաեւ՝ Արցախի մնացած ժողովուրդը: Բաքվում գերի պահվելու փոխարեն, նրանք պետք է լինեն հայրենիք վերադառնալու իրավունքի շարժման առաջնագծում: Նրանց շարունակական կալանքը ոչ միայն անօրինական է, այլեւ խորը անարդարություն է այն անհատների նկատմամբ, ովքեր պետք է պաշտպանված լինեն միջազգային իրավունքով եւ մարմնավորում են ամբողջ տեղահանված ժողովրդի կոլեկտիվ իրավունքները:

Արա ԱԼՈՅԱՆ

Կամ

ԾԱՆԻՐ ՁՔԵՑ

Սնաց, որ Վաղարշապատ խոշորացված համայնքի ընտրությունների մասնակից քաղաքական ուժերն ընդունեն կամ չընդունեն ընտրությունների արդյունքները: Ստեղծված իրավիճակում ընտրությունների արդյունքները չընդունելը, եթե անգամ դա չհանգեցնի ընտրությունները չեղարկելուն, ապա առնվազն կբացահայտի, թե ՔՊ-ն քանի թիմով էր մասնակցում այդ միջոցառմանը: Կարծում եմ՝ ընդդիմադիր Արամ Զավենիչն ու էլի մի քանիսը իսկույն կբացահայտվեն որպես Նիկոլի սատելիտներ:

Բայց եկեք դավադրությունների տեսության հետեւից չընկնենք եւ փորձենք սառը դատել ընտրությունների ժամանակ տեղի ունեցածի մասին՝ սկսած ընտրախախտումներից եւ վերջացրած քարոզչական սխալներով, որ թույլ տվեցին թեկնածուներից գրեթե բոլորը:

Հաղթո՞ղ է, արդյոք, ՔՊ թեկնածուն: Թվերն ասում են՝ այո, հավաքել է 50 տոկոսին մոտ ձայներ, վերջնահաշվարկում ՔՊ-ի վրա կգրվեն նաեւ փոշիացած ձայները, ու 50+1-ը կապահովվի: Այսքանը՝ թվերի լեզվով: Իսկ ինչի՞ մասին են խոսում, օրինակ, արձանագրված ընտրախախտումները: Ի վերջո, ՔՊ-ն իր տոկոսները խփել է հենց ընտրախախտումների շնորհիվ: Ի՞նչ չեն արել ՔՊ-շնիկները՝ իրենց ընտրողներին ցուցակներ չե՞ն խցկել, մահացածներին չե՞ն բերել ընտրության, Ոստիկանությունը ՔՊ-ի «ընտրազանգվածին» 9-րդ ձեւերով չի՞ ապահովել, ընտրողներին ընտրատեղամասեր քշելու եւ ընտրատեղամասերի տարածքում ու ներսում ուղղորդումներ չե՞ն եղել, լույսերը չե՞ն անջատվել, ՔՊ վերնախավը Էջմիածնի ու հարակից գյուղերի, այսպես կոչված, օլիգարխիկների գործողությունները չի՞ համակարգել այդ օրը, պետական լծակները, սկսած վարչապետի աշխատակազմից, չե՞ն գործել... Ո՞ր մեկը թվարկես... Տեղամասային ընտրական հանձնաժողովների ոչ ՔՊ-ական նախագահների ու անդամների վրա Արամ Զավենիչի ԲՏՌ-ներով հոգեբանական գրոհներ չե՞ն ձեռնարկվել, ոստիկանությունն աչք չի՞ փակել կուտակումների, քվեախցիկի հետեւում 2 եւ ավելի մարդու առկայության, բաց քվեարկությունների, բացահայտ ուղղորդումների վրա: Ծիծաղելի կլիներ, այնպես չէ՞, եթե այսքանից հետո էլ իշխող ուժը «չհաղթեր»: Սրանք դրել՝ բուլդոզերը քշել են ժողովրդավարության վրա ու դեռ համարձակվում են պարծենալ իրենց «հաղթանակով»: Եվ սա է պատճառը, որ ես խոսում եմ հետընտրական պրոցեսներ սկսելու անհրաժեշտության մասին: Չենք ընդունում, եղբայր, այս ընտրությունների արդյունքները, ժողովրդավարություն չի՞... Չենք ընդունում, եւ վերջ: Հավանաբար, վերահաշվարկի դիմումներ էլ կան, նաեւ՝ բազմաթիվ հաղորդումներ՝ այլ կարգի ընտրախախտումների մասին, որոնք վրիպել են տեսախցիկներից ու դիտորդների աչքից: Ասում եմ՝ ձեռքի հետ էլ հարց դնենք Նիկոլի առաջ՝ բա ասում էիր՝ ընտրախախտումների էջը փակված է, ինչո՞ւ ես խաբել ժողովրդին: Ո՞վ է տեսել, որ 7 տարի շարունակ համայնքը քանդած, կրիմինալի մեջ կորցրած քաղաքական ուժին այդ համայնքի բնակչությունը վերընտրի: Մարդիկ հո ապուշ չե՞ն... Դու էլ ես հասկանում, չէ՞, Նիկոլ, որ ՔՊ-ն ընտրախախտումներով է գավթել համայնքային իշխանությունը, որ այստեղ գործել է ոչ թե «ամենասիրված» ու «ամենակարող» Նիկոլի ֆենոմենը, այլ բոլոր ուղղություններով պարտություն կրած ՔՊ-ի զոռբայությունը:

Վաղարշապատի ընտրությունների թվերը համոզիչ չեն նաեւ այլ տեսանկյուններից: Ես, օրինակ, տարակուսում եմ, երբ փորձում են ինձ թվերով ապացուցել, որ այդ խոշորացված համայնքի բնակչության կեսից ավելին կարող է թրքամետ լինել եւ պաշտպանել ՀՀ իշխանությունների վարած (պրո)թուրք-ադրբեջանական քաղաքականությունը: Դուք ուզում եք ասել, որ վաղարշապատցիները կողմ են Կիրանցն ու մեր մյուս գյուղերը՝ անկլավների անվան տակ, Ադրբեջանին հանձնելո՞ւն, դուք ուզում եք ասել, որ Վաղարշապատի գյուղերի աշխատավորները հավատում են իրենց արտադրած լոլիկն ու մյուս կուլտուրաները Նախիջեւանով Ադրբեջան, ապա այլ երկրներ արտահանելու ցնորքի՞ն, դուք ուզում եք ինձ համոզել, որ վաղարշապատցիները ոչինչ չե՞ն լսել թուրքական էքսպանսիայի ու դրանից տուժելու հեռանկարների մասին: Վերջապես, դուք ուզում եք ասել՝ վաղարշապատցիներն անհամբեր սպասում են Էջմիածնում Նիկոլի հատուկ հավաքի՞ն, որ տեսնեն, թե նա ինչպես է հիմնահատակ ավերում մայր տաճարը...

Իսկ հիմա՝ մի քանի խոսք նախընտրական քարոզչության ընթացքում թեկնածուների (քաղաքական ուժերի) թույլ տված սխալների մասին: Իշխանականներին չեմ անդրադառնա: Նրանք, ինչպես եւ սպասվում էր, քարոզչություն, որպես այդպիսին, չեն իրականացրել: Այո, փորձել են որոշ գյուղերում ուտուշ-խմուշ անելով, զուռնա-դհոլ խաղացնելով իրենց նկատմամբ հետաքրքրություն առաջացնել: Այդպես անում էին նաեւ երբեմն-երբեմն մեր գյուղ եկող քյանդրբազները (լարախաղացները), որ մարդ հավաքեին գլխներին ու փող ուզեին «ակամա» հանդիսատեսից: ՔՊ-ի քարոզչության ողջ ծանրությունն ընկած է եղել նրա սատելիտ ուժերի ու թեկնածուների վրա, որոնք ջանք չէին խնայում՝ վատաբանելու վաղարշապատցիների գրեթե 7 պորտը, որ Մանվել Գրիգորյան եւ Սեյրան Սարոյան են հանդուրժել իրենց մեջ, որ տուն, գյուղ ու քաղաք են կառուցել, այսպես կոչված, նախկինների իշխանության տարիներին: Եվ, որքան էլ տարօրինակ էր, այս ֆրոնտում առաջատարն Արմեն Զավենիչն էր կամ նրա թեկնածուն, որ սպառնում էր իր երկու ձեռքը կտրել, բայց չսեղմել ընդդիմության ներկայացուցիչների ձեռքը: Ու ի՞նչ փույթ, որ Արամ Սարգսյանի եղբոր երբեմնի զինակից Մանվելը ողջ չէ, որ բռներ մեծախոս թեկնածուի ականջից ու գցեր արջերի վանդակը:

Առանձնապես գոհացուցիչ չէր նաեւ ընդդիմության քարոզչությունը: Բազմաթիվ լավ կողմերով հանդերձ՝ այն բավականին մեղմ էր, եթե հաշվի առնենք, թե ինչ ուժ էր պայքարում իրենց դեմ: Այդպիսի քարոզչությամբ, Սեւակ Խաչատրյանը գուցե կարողանար հաղթել վրացական ՏԻՄ ընտրություններում, բայց ոչ երբեք Հայաստանում: Ասել եմ ու կասեմ՝ ՔՊ-ն ուրիշ «ֆրուկտ ա»: ՔՊ-ի գլխի տակ փափուկ բարձ դնելը, թե պատրաստ եմ աշխատել նրանց մեջ եղած նորմալ մարդկանց եւ մասնագետների հետ, մեղմ ասած, չի աշխատում: ՔՊ-ում չկա այն ընկալումը, որ իրենց մեջ նորմալ մարդիկ կան: Այնտեղ գրեթե բոլորը հավասար չափով նիկոլական են, ոմանք՝ նույնիսկ ավելի նիկոլական: Դե եկ ու սրանց համերաշխություն եւ հանդուրժողականություն քարոզիր: Նույն սխալը, ականջը կանչի, Վարդան Ղուկասյանը թույլ տվեց: Ասում էր՝ սա, սա, սա անպետք մարդիկ են, նրանցից կազատվենք, իսկ մյուսները կարող են աշխատել: ՔՊ-ում գնահատեցի՞ն այդ մոտեցումը... Միամիտ չլինեք: Նույնն էլ, եթե ոչ ավելի վատը, Վաղարշապատի համայնքապետի ընդդիմադիր թեկնածուին էր սպասվում, եթե նա հաղթեր այս ընտրություններում: ՔՊ-ն, քանի որ բնավորությամբ ներհակ է, ինքնահավան է, իրենից դուրս ոչինչ ու ոչ ոքի չի ընդունում, արժանի չէ, որ նրա դեմ հանդուրժողականություն քարոզես: Հանուն հայրենիքի, հանուն շենացման, հանուն բարօրության, հանուն վաղվա լավ օրվա քարոզչությունն այս պարագայում չի աշխատում: Ավելին ասեմ՝ ժողովուրդը մոռացել է այդ բաները, ժողովուրդը չի հավատում արդեն: Նիկոլի պոպուլիզմը կերել է մարդկանց, եւ մարդկանց մի զգալի զանգված, 7 տարի իր մաշկի վրա չզգալով որեւէ դրական փոփոխություն, ակամա հավատում է այդ խաբկանքին, թե ապագան արդեն այսօր է, որ ինքն այսօր ավելի լավ է ապրում, քան երեկ, եւ ավելի լավ կապրի, եթե Նիկոլին խանգարող չլինի:

Ո՛չ Նիկոլի ձախողումները, ո՛չ էլ Վաղարշապատի՝ վերջին 7 տարվա կառավարման խայտառակ պատկերը, կարելի է ասել, դաս չեղան վաղարշապատցիներին: Նրանց մի մասը, գուցե, փորձեց կրկնել Փարաքարի կամ Գյումրու օրինակը, բայց հաջողության չհասավ: Ոչինչ, պատահում է: ՔՊ-ն այնպես է կառչել իշխանությանը, որ նրան այդ իշխանությունից մաս-մաս պոկելը բավականին դժվար աշխատանք է: 2021 թվականին փորձ արվեց ՔՊ-ին ամբողջությամբ եւ համակողմանի զրկել իշխանությունից, որը չհաջողվեց, ու մենք մինչ օրս հեծում ենք այդ ուժի իշխանության տակ: Առջեւում նոր ընտրություններ են, այս անգամ՝ Ազգային ժողովի, ու պետք է ամեն ինչ անել՝ ՔՊ-ից ազատվելու համար: Այդ գործում հայ ժողովրդին ոչ ոք չի օգնելու: Հույս չունենաք: Այդ ընտրություններում նժարի վրա են լինելու մեր ժողովրդի ու մեր երկրի ճակատագիրը՝ մի կողմից, եւ ՔՊ-ի թրքահոտ կառավարումը՝ մյուս կողմից: Թվեր դարձյալ նկարվելու են, վարչական ռեսուրս դարձյալ կիրառվելու է, ընտրախախտումներ դարձյալ լինելու են, առատության եղջյուրից պոպուլիզմը դարձյալ հորդելու է, ընդ որում՝ ավելի շատ ու ավելի ստոր ձեւով... Թքած... Հաղթել է պետք, ՔՊ-ին հեռացնել է պետք, երկիրը փրկել է պետք, հայ ժողովրդի թրքացումը կասեցնել է պետք: Ինչպե՞ս... Քո քվեով, սիրելի հայրենակից, իսկ եթե հարկ լինի, նաեւ քո հետընտրական հզոր ալիքով:

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ՊԵՏՔ ՉԷ ԸՆԿՆԵԼ Ո՛Չ ՀԻԱՅԱԾ ՃՇՈՅՆԵՐԻ, Ո՛Չ ԷԼ ԻՆՔՆԱՄՈՌԱՑ ՈՂԲԻ ՄԵՋ

Վաղարշապատի ընտրությունների վերաբերյալ նախնական կարելի է ասել հետեւյալը. պետք չէ ընկնել ինքնագովասանքի կամ ապոկալիպտիկ ողբերի մեջ: Հավատացեք, դրա համար հիմքեր չկան: Մենք ականատես եղանք բավականին «թարմ» հնարքների՝ եւ իշխանության, եւ ընդդիմության կողմից: Ի դեպ, ընդդիմությունն այս անգամ շատ ավելի կրեատիվ էր, ինչը չի կարող չուրախացնել:

Նախապես պետք է ֆիքսել, որ Վաղարշապատի ընտրություններում թե՛ ընդդիմությունը, թե՛ իշխանությունը փորձարկեցին որոշ տեխնոլոգիաներ, որոնք, ամենայն հավանականությամբ, նախատեսում են կիրառել 2026 թվականի խորհրդարանական ընտրություններում: Այս մասին պետք է ավելի ընդարձակ վերլուծություն անել: Հետաքրքիր է, որ հենց Էջմիածին քաղաքում իշխանության վարկանիշը զգալիորեն ավելի ցածր է, քան գյուղերում, եւ ունի կայուն նվազման միտում: Իշխանությունը սա շատ լավ հասկանում է եւ լարվում է՝ փորձելով ուղղել իրավիճակը, սակայն նրանց մոտ դա չի ստացվում:

Փաշինյանական իշխանության «սպոյլեր» կուսակցությունները գտնվում են խայտառակ վիճակում, եւ սա արդեն փաստաթղթերով արձանագրված իրականություն է, ինչը չի կարող չուրախացնել: «Քայլերի վերլուծություն» հստակ պետք է արվի, որովհետեւ Վաղարշապատը բացեց շատ խորքային ասպեկտներ՝ կապված հասարակ մարդկանց՝ իրականության ընկալման հետ (խնդիրը ո՛չ իշխանության, ո՛չ ընդդիմության ծրագրերի մեջ չէ. այստեղ ամեն ինչ շատ ավելի խորն է՝ սոցիալական հոգեբանության մակրո մակարդակում):

Ի դեպ, իշխանության ստացած «դրական» արդյունքը ձեռք բերվեց իրենց թեկնածուի նկատմամբ իշխանական, մտավորական եւ ուժային ողջ ռեսուրսի հսկայական աջակցությամբ, ինչն իրականում իշխանության համար դրական ազդակ չէ, այլ ընդհակառակը՝ խիստ բացասական է:

Այսպիսով՝ պատճառներ չկան ընդդիմադիրների համար՝ իրենց «մազերը պոկելու», եւ սա սեւ սրտի մխիթարանք չէ, այլ՝ իրականություն, որի հետ պետք է շատ լուրջ աշխատել. աշխատել, աշխատել ու կրկին աշխատել: Պետք չէ ընկնել Գյումրիի ընտրություններից հետո հիացած ճչոցների կամ Վաղարշապատից հետո ինքնամոռաց ողբերի մեջ: Մարդիկ՝ սովորական մարդիկ, ունեն հարցեր եւ իշխանությանը, եւ ընդդիմադիր ուժերին (ներառյալ արտախորհրդարանական ընդդիմությանը), եւ այդ հարցերի պատասխանները պետք է տրվեն մարդկանց:

Արման ԱԲՈՎՅԱՆ

ՔՊ-Ն ՀԱՍԿԱՑԱՎ, ՈՐ 2026-ԻՆ ԷԼ ԿԱՐՈՂ Է ՎԱՐՉԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ՀԱՂԹԵԼ

Վաղարշապատ համայնքում նոյեմբերի 16-ին տեղի ունեցած ընտրություններում ՔՊ-ն ստացավ 15 հազար 298 (48.5 %) ձայն:

Երկրորդ տեղում «Հաղթանակ» դաշինքն է՝ 10 հազար 51 քվե (31.9 %), «Մայր Հայաստան» ազգային-դեմոկրատական կուսակցությունը՝ 1692 ձայն (5.4): Մյուս ուժերը չեն անցել. «Հանրապետություն» կուսակցությունը՝ 1241 (3.9 %), «Հայրենիք» կուսակցությունը՝ 1193 (3.8 %), «Ազատ դեմոկրատներ» կուսակցությունը՝ 1177 քվե (3.7 %): «Հրապարակը» զրուցել է քաղաքագետ, տնտեսագետ **Հրանտ Միքայելյանի** հետ:

- Ինչո՞ւ ՔՊ-ն հաղթեց, եւ ինչի՞ ցուցիչ է այդ հաղթանակը:

- ՔՊ-ի հաղթանակը ցուցիչ է ընտրողների շատ փոքր մասնակցության: Եթե մենք հիշենք ուրիշ դրվագ, որտեղ ՔՊ-ն պարտվել է՝ դա եղել է Գյումրիում, իսկ այնտեղ ընտրողների մասնակցությունը եղել է բավականին մեծ: Այնտեղ Ռուբեն Մխիթարյանը, որը վերջում մտավ ընտրապայքարի մեջ, չնայած որ շատ ձայն չհավաքեց, սակայն կարողացավ ապահովել ընտրությունների քաղաքականացումը, եւ դա իշխանություններին ձեռք չի տալիս: Պետք է հաշվի առնել, որ, տիրապետելով բոլոր լծակներին, նրանք փորձում են համայնքային ընտրությունները վերածել ուղղակի տեխնիկական ընտրությունների, իսկ տեխնիկական ընտրությունների պարագայում հնարավորություններն ավելի շուտ իշխանության ձեռքում են, որովհետեւ իշխանությունը կարող է, օրինակ, հարցեր լուծել, պայմանականորեն՝ ասֆալտի հարցը: Իշխանություններն ուզում են, որ համայնքային ընտրությունները տեղափոխվեն այդ դաշտ, որ այդ ընտրությունները քաղաքական չեն:

- Ճի՞շտ եմ հասկանում, որ, ըստ Ձեզ, եթե Վաղարշապատում էլ Գյումրու ընտրությունների սցենարով կարողանային հանրության լայն զանգվածներին ճանաչելի անձի առաջադրել, ապա պատկերն այլ կլիներ:

- Իհարկե: Բացի այդ, մենք տեսանք, որ Գյումրիում տեղական հեղինակություններն ակտիվորեն մասնակցել են, բայց Վաղարշապատում այդպես չեղավ, եւ թույլ մասնակցության պատճառով իշխանությունները հաղթեցին. սա էր հիմնական պատճառը:

- Իսկ ցածր մասնակցության պատճառի հիմնական մեղավորն ո՞վ է՝ մարդկանց իրենց անօգնականության մեջ համոզող ՔՊ-ն, թե՞ ընդդիմությունը բավարար աշխատանք չի տարել այդ ուղղությամբ:

- Իհարկե՝ ընդդիմությունը: Տվյալ դեպքում իշխանությանը ձեռք է տալիս ցածր մասնակցության տոկոսը, որովհետեւ ցածր մասնակցության պարագայում իշխանությունները հաղթում են: Ընդդիմությանը ձեռք չի տալիս ցածր մասնակցությունը, եւ այս պարագայում ընդդիմությունը պետք է կարողանա կազմակերպել բարձր մասնակցություն, իսկ եթե չի կարողանում՝ դա իր մեղավորությունն է: Իշխանությունն իր վարչական ռեսուրսն ուներ, որն էլ օգտագործեց:

- Ո՞ր ընդդիմադիր ուժերն ամենալավն աշխատեցին ընտրողների հետ:

- Ի տարբերություն Գյումրվա քարոզարշավի, շատ տեսանելի չէր Վաղարշապատի քարոզարշավը, բայց տեսնում ենք, որ ընդդիմության մեջ առաջին տեղը զբաղեցրել է «Հաղթանակ» դաշինքի ներկայացուցիչը, եւ, թերեւս, ճիշտ կլինի այսպես որակել, որ ամենալավ աշխատանքն իրենք են տարել:

- Տարբերությունը ՔՊ-ի հետ 5 հազար քվե է եղել:

- 5 հազար քվեն որոշ դեպքերում կարող է մեծ թիվ լինել, իսկ որոշ դեպքերում կարող է փոքր թիվ լինել: Տվյալ դեպքում, իմ կարծիքով, այդքան էլ մեծ տարբերություն չէ՝ ընդդիմության դաշինքը, թեկնածուն բավականին լավ է աշխատել, ուրիշ բան, որ ընդդիմության սուբյեկտների թիվը քիչ է եղել, եւ այս պարագայում երեւի թե դիտարկենք, որ սա ոչ թե այս սուբյեկտի պարտությունն է եղել, այլ՝ ընդդիմադիր դաշտի: Օրինակ, «Մեր ձեւով» դաշինքը չի մասնակցել, եւ դա էլ է իր հերթին ազդել մասնակցության վրա, իսկ եթե մասնակցեին, հնարավոր է ընտրությունների վերջնարդյունքն այլ լիներ:

- Վաղարշապատի ընտրություններում ամենաքիչ ձայնը հավաքել էր Մանվել Գրիգորյանի դուստրը, որը հանդես էր եկել «Ժառանգություն» կուսակցության ցուցակով: Այսինքն, կյանքի ճանապարհ անցած, մարդկանց կողմից ճանաչված՝ վաստակ ունեցող մարդու դուստր կամ որդի լինելն այլեւս չի՞ աշխատում:

- Նախ, հայտնի մարդու հարազատ լինելը երբեք լուրջ գործոն չի եղել, մենք ունենք նման փորձ, երբ, օրինակ, Կարեն Դեմիրճյանի որդին՝ Ստեփան Դեմիրճյանը, թեեւ իր քաղաքական գործունեության մեջ առաջին իմպուլսն ունեցել է, բայց վերջում դա ոչ մի դրական բանի չհանգեցրեց: Երկրորդը. մենք ունենք Արամ Սարգսյանի փորձը, որը փորձում է եղբոր՝ Վազգեն Սարգսյանի հեղինակությունն օգտագործել եւ նրա շնորհիվ ինչ-որ հարցեր լուծել: Նույնը Արգիշտի Մեխակյանն է, որը Մեխակ Մեխակյանի որդին է, նրանք էլ փորձեցին այդ հանգամանքն օգտագործել, բայց չեմ կարծում, թե դա աշխատող հիմնական գործոնն է եղել: Մանվել Գրիգորյանը չնայած որ հեղինակություն էր, բայց աջակցություն չուներ. սա շատ կարեւոր է, եւ սա էլ պետք է հաշվի առնել: Մեկ այլ կարեւոր հանգամանք կա. ես որքան հիշում եմ, «Ժառանգություն» կուսակցությունը եւ անձամբ նշված անձնավորությունը հայտարարեց, որ, այսպես կոչված, նախկինների հետ չի համագործակցելու, ինչքան որ ես եմ հիշում: Եթե ես ճիշտ եմ, ապա ամեն ինչ պարզ է: Եթե մարդիկ ընդդիմության օգտին են քվեարկում, ապա ինչ իմաստ ունի քվեարկել այն մարդկանց օգտին, ովքեր կարծես ամենասկզբից հայտարարում են՝ ընդդիմության ընդդիմություն են, ոչ թե իշխանության ընդդիմություն են: Սա ընդհանրապես լուրջ խնդիր է Հայաստանում, երբ իշխանությունների վարած քաղաքականությունն ընդդիմության դեմ բերում է նրան, որ մարդիկ ուղղակի փորձում են ընդդիմությունից մի քիչ հեռու մնալ: Սակայն իրենք չեն հասկանում, որ այդպիսով իրենց են վնասում: Այդ ձեւով իրենց քարոզարշավը կամ իրենց թեզերը պարզապես չեն ընկալվելու: Օրինակ, չկազմելով կոալիցիա ընդդիմության հետ, ինչ պետք է խաղային՝ ես սա չեմ հասկանում: Այնպես որ, այս դեպքում այնքան էլ չեմ զարմանում, որ հաջողություն չկար:

Հայկա ԱԼՈՅԱՆ

ԴՈՆԱԼԴ ԹՐԱՄՓԸ, ՀԻՆԳ ԿՈՆԳՐԵՍԱԿԱՆ ԿԱՆԱՅՔ ԵՎ ՍԿԱՆԴԱԼԱՅԻՆ «ԷՓՇՏԵՅՆԻ ԳՈՐԾԸ»

Այս պատմությունը սկսվել է դեռ այս տարվա հուլիսին, երբ հանրապետական Թոմաս Մեսին եւ դեմոկրատ Ռո Հաննան Ներկայացուցիչների պալատ բերեցին discharge petition, որը պարտավորեցնում էր արդարադատության նախարարությանը՝ հանրայնացնել «Էփշտեյնի գործի» բոլոր փաստաթղթերը: Discharge petition-ը սովորական ստորագրահավաք չէ, այլ հատուկ գործընթաց, որը գոյություն ունի Ներկայացուցիչների պալատում: Դրա համաձայն, օրենքի նախագիծը կարող է դրվել Պալատի քննարկմանը՝ այն բանից հետո, եթե հավաքի մեծամասնության ստորագրությունը, նույնիսկ եթե չի ներկայացվել պրոֆիլային կոմիտեի քննարկմանը: Դա հնարավորություն է ընդդիմությանը՝ անցկացնելու իր նախաձեռնությունները՝ առանց կոմիտեի եւ նույնիսկ՝ առանց խոսնակի հավանության: «Էփշտեյնի գործը» չափազանց անհարմար գործ է Թրամփի համար: Ոլորտային կոմիտեն, որում մեծամասնություն են կազմում հանրապետականները եւ խոսնակ Մայք Ջոնսոնը, երբեք էլ թույլ չէր տա, որ նման օրենքի նախագիծ քննարկման դրվեր: Դրա համար պետք էր, որ նախագիծը հավաքեր 218 ստորագրություն: Դեմոկրատները հուլիսի դրությամբ ունեին 213 մանդատ: Discharge petition-ը ստորագրեց նաեւ չորս հանրապետական, եւ դա գրեթե բավարար էր, որպեսզի նախագիծը դրվեր քննարկման: Եվս մեկ ձայն դեմոկրատները պետք է ստանային դեռ սեպտեմբերին: Բանն այն է, որ այս տարվա մարտին մահացավ Արիզոնայի նահանգը ներկայացնող դեմոկրատ կոնգրեսական Ռաուլ Գրիխալվան, որն իր շրջանն էր ներկայացնում Ներկայացուցիչների պալատում՝ սկսած 2002 թվականից: Նրան փոխարինեց դուստրը՝ Ադելիտան: Սեպտեմբերի 23-ին Ադելիտան ընտրվեց Կոնգրեսի անդամ: Դեմոկրատները սպասում էին, որ ձեւական պրոցեդուրաներն արագ կկատարվեն, եւ կունենան անհրաժեշտ մեկ ձայնը: Սակայն խոսնակ Մայք Ջոնսոնը նախ հայտարարեց, որ հնարավոր է, որ, օրինակ, Ադելիտա Գրիխալվան երդվի, քանի որ փաստացի արձակուրդներ են, բացի այդ էլ՝ «շաթ-դաունի» պայմաններում Պալատը համարվում է արձակուրդում, թեեւ հակառակն էլ է եղել: Նոյեմբերի 12-ին, այնուհանդերձ, Ադելիտան երդվեց եւ անմիջապես դրեց իր ստորագրությունը այդ փաստաթղթի տակ՝ ապահովելով 218-րդ ցանկալի ստորագրությունը: Մինչ այդ պահը ցանկացած մեկը, որ նախապես ստորագրել էր, կարող էր հրաժարվել իր ստորագրությունից: Դրա համար էլ բոլորի հայացքներն ուղղվեցին ստորագրած չորս հանրապետականների կողմը: Մեսին, դե, բնականաբար, չէր հետ կանգնի՝ նախ, որ նախաձեռնողներից էր եւ ապա՝ միշտ եղել է դիսիդենտ: Մնացին երեք կոնգրեսականներ, երեքն էլ՝ կանայք. Մարջորի Թեյլոր Գրինը՝ Ջորջիա նահանգից, Լորեն Բոբերթը՝ Կոլորադոյից, եւ Նենսի Մեյսը՝ Հարավային Կարոլինայից: Թեյլոր Գրինը վերջին ամիսներին վերածվել է Թրամփի կատաղի քննադատի: Դժվար թե նա փոխի դիրքորոշումը: Հետեւաբար, հնարավոր է փոփոխություն միայն Բոբերթի եւ Մեյսի դեպքում: Մեյսի համար Էփշտեյնը համարյա անձնական թշնամի է: 16 տարեկանում նա ենթարկվել է սեքսուալ բռնության եւ դժվար թե փոխի կարծիքը մի գործի հետ կապված, որտեղ նույն հանցատեսակը կա: Նրան նույնիսկ Թրամփն է զանգահարել, բայց լսափող չի վերցրել: Թրամփի թիմն ակտիվորեն սկսել է մշակել Բոբերթին: Հաղորդվում էր, որ նրա հետ հանդիպելու են արդարադատության նախարարը, փոխնախարարն ու հետաքննությունների դաշնային բյուրոյի ղեկավարը: Հանդիպումները կայացան, սակայն Բոբերթը հրապարակեց միայն սառը պատասխան՝ հրաժարվելով ընդառաջել: Կոլորադոյի նահանգից նախկին ռեստորանատեր Բոբերթը, որը ծնվել է չափազանց աղքատ ընտանիքում, երբեք քոլեջում չի ուսանել եւ ունի չափազանց պահպանողական հայացքներ, դժվար թե նահանջեր նման հարցում: Եվ հիմա, եթե Ներկայացուցիչների պալատն ընդունի օրենքի նախագիծը, այն կմտնի Սենատ: Այնտեղ արդեն մեծամասնությունը հանրապետականներն են, սակայն չկա երաշխիք, թե նրանք համախմբված կերպով կքվեարկեն: Եթե երկու պալատում էլ օրենքն անցնի, ապա Թրամփը շատ վատ դրության մեջ կհայտնվի: Իհարկե, կարող է օգտվել նախագահական իրավունքից եւ «վետո» կիրառել: Սակայն դա դեմոկրատները կներկայացնեն որպես մեղավորության ընդունում: Հատկապես, որ արդեն հրապարակվել են հատվածներ Թրամփի համար չափազանց անհարմար գրագրությունից, որտեղ Էփշտեյնը հայտարարում է, որ Թրամփը, իհարկե, տեղյակ է եղել աղջիկների մասին:

Հեղինակ՝ Ալեքսեյ Մակարկին, Bunin & Co տելեգրամյան ալիք

Զելենսկուն փոխարինող են փնտրում

Միացյալ Նահանգներում ակտիվորեն զբաղված են Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկուն փոխարինող փնտրելով: Այս մասին հայտարարել է Ուկրաինայի նախկին վարչապետ Նիկոլայ Ազարովը: Դա կապված է երկու ճակատում Զելենսկու վարչակազմի ձախողումների հետ: Մեկը կապված է ռուսական ուժերի հետ ռազմաճակատում ունեցած շարունակական պարտությունների, մյուսը՝ երկրի ներսում սկսված կոռուպցիոն սկանդալների հետ, որպիսիք Ուկրաինան չէր տեսել այն օրվանից ի վեր, ինչ Զելենսկին 2019 թվականին եկել էր իշխանության: Ուկրաինայի նախկին նախագահ Վիկտոր Յանուկովիչի կառավարման շրջանում՝ 2010-14 թթ., վարչապետ եղած Ազարովը նշում է, որ այդ գործընթացի շրջանակում է, որ Միացյալ Նահանգներ են կանչվել Զելենսկու կաբինետի տարբեր անդամներ: «Ինձ հայտնի է, որ արդեն կես տարի է, ինչ ամերիկացիներն ակտիվորեն շփվում եւ հանդիպում են որոշ քաղաքական գործիչների հետ՝ Կիեւի ռեժիմից: Ձեւավորում են նրանց մասին պատկերացումներ, փնտրում են հարմար մարդու, որով կկարողանան փոխարինել Զելենսկուն»,- ասել է Ազարովը:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՊԱՄՖԼԵՏ

ԻՆՉՊԵՍ ՄԱՔՐՎԵԼ ՆԻԿՈԼԻ ՇԱՌԻՑ

Փաշինյանը շնորհավորական ուղերձ է հղել Վաղարշապատ խոշորացված համայնքի իր սիրելի ընտրողներին եւ խոնարհվել նրանց առաջ՝ ՔՊ թեկնածու Արգիշտի Մեխակյանին համայնքի ղեկավար ընտրելու կապակցությամբ: Ըստ էության, վատ բան չի արել, եւ, ըստ իս, կարելի էր այսքանով սահմանափակվել: Բայց նա Փաշինյան Նիկոլը չէր լինի, եթե իր շնորհավորական ուղերձում մինչեւ վերջ չգնար ու այդ մարդկանց ընտրությունը, Արգիշտի Մեխակյանի ուրախությունն էլ հետը՝ չմխտռեր:

Ահավասիկ, ըստ իրեն, վաղարշապատցիներն այս ընտրությամբ իբր աներկբա աջակցություն են ցուցաբերել մեր պետականությունը, անկախությունը, ինքնիշխանությունը, ազատությունն ուժեղացնելու «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ռազմավարությանը: Բոլորին է, չէ՞, հայտնի ՔՊ-ի՝ մեր պետականությունը, անկախությունը, ինքնիշխանությունը, ազատությունն ուժեղացնելու ռազմավարությունը: Այսինքն, բոլորը գիտեն, չէ՞, որ ՔՊ-ն, որպես քաղաքական ուժ կամ միավոր, առհասարակ որեւէ ռազմավարություն չունի, եթե չհաշվենք այդ ուժի՝ Փաշինյանի գլխավորությամբ ամեն ինչ քանդելու մոլուցքը: Եթե սա ռազմավարություն է, ուրեմն այնքան էլ ուղղված չէ որեւէ բան ուժեղացնելուն: Էլ երկար չպատմեմ ԱԺ-ի վրա գրոհը, դատարանների վրա գրոհը, Արցախի պետականության վրա գրոհը, Կիրանցի, Ջերմուկի բարձունքների, Սեւ լճի, Գորիս-Կապան ճանապարհի «ազատագրումը»… Այս ամենը ՔՊ-ի «ռազմավարության» մաս է կազմում, մի բան, որ Նիկոլ Փաշինյանը համարում է մեր պետականությունը, անկախությունը, ինքնիշխանությունը, ազատությունն ուժեղացնելու ռազմավարություն: Էլի թող համարի, այդքան է հասկանում, իսկ ինչո՞ւ է վաղարշապատցիներին «կեղտոտում» այդ ամենով, թե բա՝ դուք կարեւոր քայլ արեցիք իմ եւ ՔՊ-ի «կերած բողկերն» արդարացնելու ուղղությամբ:

Հետեւյալ կետում վաղարշապատցիներին գրում է. «Ձեր ընտրությամբ կարեւոր լիցք տվեցիք մեր սրբության սրբոցը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, Կտրիճ Ներսիսյանից ազատելու գործընթացին»: Էն, որ վերեւում գրել էի՝ մունդռել է վաղարշապատցիների ընտրությունն ու Արգիշտի Մեխակյանի ուրախությունը, հենց այս կետի պատճառով էի գրել: Անմիջապես երեւում է, որ Փաշինյանն այնքան էլ տեղյակ չէ Վաղարշապատի ընտրությունների քարոզարշավին եւ պատկերացում չունի այն մասին, թե ինչու են վաղարշապատցիներն ընտրել Արգիշտի Մեխակյանին: Խնդրեմ՝ Մեխակյանից սկսած, հարցում անցկացրեք նրա ընտրողների շրջապատում եւ տեսեք, թե քանի մարդ կհայտարարի, որ ինքը Մեխակյանին (ՔՊ-ին) ձայն է տվել, որպեսզի «կարեւոր լիցք հաղորդի» Վեհարանը գրոհելու Նիկոլի նախաձեռնությանը: Վստահեցնում եմ, որ 1-2 «բեզբաշեննիյ» ՔՊ-ականից բացի, ոչ ոք այդպիսի մեղքի տակ չի մտնի: Չեն մտնի, քանի որ գիտեն՝ եթե վաղը մի բան պատահի, ու Նիկոլն իսկապես գնա Եկեղեցու դեմ, հայ ժողովուրդն իրենց է մեղադրելու այդ այլանդակությանը նպաստելու եւ «լիցք հաղորդելու» մեջ: Ասել, որ իր այս պոռոտախոսությամբ Նիկոլն ուղղակի ք.քի մեջ է գցել Արգիշտի Մեխակյանին, նշանակում է՝ դեռ ոչինչ չասել: Նիկոլ, Արգիշտին քեզ գեթ մեկ անգամ վստահեցրե՞լ է, որ քո այդ գարշելի նպատակն իրագործելու համար է ստանձնում Վաղարշապատում ՔՊ-ի ցուցակը գլխավորելու գործը:

Սա ես դու, Նիկոլ, ով հետդ գործ է բռնում, գցում ես ք.քի մեջ: Սարիկը մի կերպ պլստաց, բայց մյուսները դեռ քեզ հետ են՝ Սիմոնյան Ալենը, Կոնջորյան Հայկը, Ռուբինյան Ռուբենը, Ալեքսանյան Վահագնը, Պապոյան Գեւորգը, Թորոսյան Արսենը ու էլի լիքը թրքամետ տղաներ ու աղջիկներ,

որոնք չեն պատկերացնում իրենց գլխին գալիքը:

Այսու՝ Արգիշտի Մեխակյանին խորհուրդ եմ տալիս հանդես գալ պատասխան հայտարարությամբ եւ ընտրողների առաջ մաքրվել Նիկոլի շառից ու դրանից բխող շառափորձանքից: Պարոն Մեխակյան, Էջմիածնի «հավաքում» մի բան այնպես չեղավ, Նիկոլն առաջինը քեզ է կախելու քաղաքի հրապարակում:

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ՇԵՐ ՎԱՐՈՐԴԻ ՀԵՏ, ՄԱՇՎԱԾ «ԳԱԶԵԼ»-ՈՎ ՄԻ ԿԵՐՊ ՀԱՍԱ ԾՈՎԱԳՅՈՒՂ

Նոյեմբերի 14-ի առավոտյան Երեւանից հասարակական տրանսպորտով մեկնեցի Իջեւան: Որոշեցի ժամը 12-ն անց 30-ի ուղերթով վերադառնալ: Երեւան պետք է վերադառնայի այն վարորդի հետ, որի հետ Իջեւան էի մեկնել: Իջեւան-Երեւան եւ հակառակ ուղղությամբ աշխատում են բարոյապես եւ ֆիզիկապես մաշված «Գազել» միկրոավտոբուսներ: Դեռ Երեւանում նկատել էի, որ տարեց՝ 70-ն անց վարորդը վատ լսելուց զատ, առողջական այլ խնդիրներ էլ ունի: Երբ ուղեւորները վարորդին խնդրում էին կանգնել, որպեսզի իջնեին, վարորդը չէր լսում, ստիպված՝ մյուս ուղեւորներն էին բարձրաձայնում, որ արգելակի մեքենան: Իջեւան-Երեւան ճանապարհին շատ էին Հաղարծին գյուղում, Դիլիջանում իջնողները, միկրոավտոբուսում մնացինք 6 հոգով: Տարօրինակ էր, որ թերբեռնված մեքենան դանդաղ էր բարձրանում Դիլիջանի ոլորանները: Ոլորաններից մեկում այն հարկադրված կանգ առավ: Տարեց վարորդը բարձրացրեց շարժիչի կափարիչը, սկսեց ջրամանից ջուր լցնել: Բավական ժամանակ անցավ, ուղեւորներն իջան մեքենայից, 2 տղա ծխախոտ վառեցին, ես էլ, նայելով Դիլիջանի տերեւաթափ անտառներին,ափսոսացի, որ ոսկե աշունն անցնում է: Այդ ժամանակ ծանոթներիցս մեկն ինձ զանգահարեց, կարեւոր, հրատապ լուր հայտնեց: Նրան ասացի, որ նյութը կպատրաստեմ, կհրապարակեմ Երեւան հասնելուն պես: Ուղեւորներից մեկը՝ Խանլարի շրջանի գյուղերից մեկից տարիներ առաջ Տաշքենդում վերաբնակված, այնտեղ սուչուխ ծախող կինը շտապելու կարիք չուներ, նրա ինքնաթիռը մի քանի օրից էր թռչելու, կինը «Գազելում» պատմում էր իր իջեւանցի ամուսնու տմարդի արարքի մասին, որ իրեն ու իր 2 աղջիկներին թողել, իրենից 20 տարով մեծ կնոջ հետ է ամուսնացել, որ ուզբեկները, ի տարբերություն հայերի, խիստ հարգալից են ծերերի հանդեպ եւ այլն: Միջինից մեծ տարիքի, լուրջ դեմքով մի կին Երեւանում անհետաձգելի գործ ուներ, անհանգստանում էր հարկադրական տեւական կանգառից: Որոշ ժամանակ անց «Գազելը» շարժվեց, սակայն մի կերպ հասավ Ծովագյուղ, նույնանուն սուպերմարկետի դիմաց, գործող ԱԳԼՃԿ-ում ստիպված կանգնեց: Մտածեցի՝ ուրբաթ օրը, ամսի 13-ը վատ նշան է, սակայն հիշեցի, որ ամսի 14-ն է: Վարորդը նորից ջուր լցրեց ռադիատորի մեջ: Ուղեւորներն իջան: Նրանցից մեկը՝ Մոսկվայում բնակվող խաշթառակցի տարեց տղամարդը ԱԳԼՃԿ-ում ջերմ զրուցում էր լիցքավորվող ավտոմեքենայի վարորդի եւ ուղեւորուհու հետ: Երբ վերադարձավ «Գազել», հարցրի, թե ինչու այդ ավտոմեքենայով Երեւան չմեկնեց, տղամարդն ասաց, որ այդ աղջիկն իր քրոջ աղջիկն էր, իսկ նրանց հետ չմեկնեց, քանզի Քանաքեռով էին գնալու, սակայն այդ պահին արդեն հասկացավ, որ հնարավորությունը բաց է թողել: Տղամարդն ասաց, որ պետք է երկար ժամանակ կանգնած «Գազելի» վարորդից ուղեվարձը՝ 1500 դրամը ետ վերցնել: Ես դեմ էի գումարը վարորդից հետ ուզելուն: Վարորդը բոլորին խնդրեց իջնել, հրել մեքենան, որ շարժիչը գործարկվի: Բոթելով «Գազելը»՝ մտցրինք միջպետական ճանապարհ, բայց այդպես էլ չգործարկվեց; Եթե գործարկվեր էլ, Սեւանի «Լեւ-Լեն» ԱԳԼՃԿ-ում դեռ պետք է գազալիցքավորվեր, հարց է՝ հետո ինչպե՞ս պետք է գործարկվեր: Լուրջ դեմքով կինը Ծովագյուղի ԱԳԼՃԿ-ում լիցքավորվող մի ավտոմեքենայի էր մոտեցել, վարորդին բացատրել էր իրավիճակը՝ նստել այդ մեքենան: Ես հիշեցի, որ Երեւանում հրատապ նյութ եմ գրելու, թույլտվություն ստանալով՝ նույնպես նստեցի այդ «Մերսեդեսի» վարորդի կողքին: Ծովագյուղից Երեւան մեկնող, Մոսկվայում գործարարությամբ զբաղվող Արմենը բարյացակամ, առանց վճարի մեզ Երեւան հասցրեց:

Երեւան-Իջեւան-Երեւան ուղերթը նախկինում սպասարկում էր ԱՍԱԼԱ-ի մարտիկ Վարուժան Կարապետյանի ընկերությունը: Վ. Կարապետյանը 1982թ. Փարիզի Օռլիի օդանավակայանում ահաբեկչական գործողություն կատարելուց հետո դատապարտվել էր ցմահ ազատազրկման: Նա 2001-ին վաղաժամ ազատվելով՝ տեղափոխվել էր Հայաստան, «Իջեւանի գիծը» նրան էին տվել: 2019-ին Վ. Կարապետյանը մահացել է, ուղերթը սպասարկում է Վերին Պտղնի գյուղից նրա մտերիմը: Երեւան -Նոյեմբերյան-Երեւան ուղերթում աշխատում են «Մերսեդես», «Ֆորդ» հարմարավետ միկրոավտոբուսներ, իսկ Իջեւանի գծում՝ բարոյապես եւ ֆիզիկապես մաշված գազելներ:

Ե՞րբ է այդ «գծի» համար մրցույթ հայտարարվել, մրցույթի առաջարկում նշվե՞լ է, որ այն սպասարկելու են մաշված գազելներ: Վարչապետ Նիկոլ Փաշինյանը զբաղվում է իրեն վերաբերող եւ չվերաբերող բոլոր գործերով, սակայն հայրենի Իջեւանի հետ Երեւանի կապն իրականացնում են մաշված, ուղեւորների օրը փչացնող, նրանց կյանքը վտանգող, կես ճանապարհին մնացող գազելներ:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ՎԱԽԻ ԵՎ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԱԶԱՏ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՉԻ ԼԻՆՈՒՄ



Էջմիածնի ավագանու ընտրությունների արդյունքների հրապարակումից հետո ամենաշատ հնչող հարցն այն է, թե ինչու այդպես եղավ, ինչու իշխանության եւ նրա թեկնածուի նկատմամբ նման համատարած անվստահության պայմաններում ՔՊ-ին հաջողվեց հաղթել ընտրություններում: Այն, որ ՔՊ-ին չհաջողվեց 50 + ստանալ, այնքան էլ հոսադրող կամ պարտության դառնությունը մեղմացնող հանգամանք չէ: Կան բազմաթիվ անհամապատասխանություններ, որոնք վկայում են, որ ընտրությունները եղել են ոչ արդար, ոչ ազատ եւ ոչ էլ թափանցիկ, ավելին՝ դրանց պաշտոնական արդյունքը համոզիչ չէ: Միայն մի հանգամանք. ավագանու 33 թեկնածու ունեցող քաղաքական ուժը ստացել է 300-ից պակաս ձայն, այն դեպքում, երբ դրա առաջին համարը իր բնակության վայրի գյուղում Աղավնատանը ստացել է 100 ձայն: Ստացվում է, որ մյուս 32 թեկնածուն ստացել է 200 ձայնից էլ պակաս, մեկ մարդը 6 ձայն էլ չի ստացել, իր ձայնն էլ հետը գումարած: Հնարավո՞ր է նման բան. դատեք ինքներդ: Կան հրապարակված արդյունքը բացատրող այլ հանգամանքներ եւս:

Սկսենք նրանից, որ ընտրություններն անցկացվել են վախի եւ ահաբեկման մթնոլորտում. մարդիկ վախեցած են եւ չեն կարող ազատորեն արտահայտել իրենց կարծիքը, պատմել իրենց տեսածի եւ լսածի ասին: Մարդիկ գիտեն, որ իրենց մի ավել խոսքի համար կարող են կալանավորվել, կարող են ենթարկվել քրեական հետապնդման. Հայաստանում հիմա այդպիսի մթնոլորտ է: Ինչ եք կարծում՝ եթե որեւէ մեկն իմանար, որ, օրինակ, ՔՊ-ն մեկ ձայնի համար 40 հազար դրամ ընտրակաշառք է բաժանում, արդյոք նա կհամարձակվե՞ր դրա մասին բարձրաձայնել, իհարկե՝ ոչ, որովհետեւ կվախենար՝ մտածելով, որ իրեն դրա համար կարող են կալանավորել եւ զրկել ազատությունից, մեղադրել կեղծ մատնության կամ այլ հոդվածով: Հայաստանում նոր իրավիճակ է. մարդկանց կարող են կալանավորել խոսքի, խոսելու համար, եւ մարդիկ այդ սպառնալիքն ընդունում են ի գիտություն:

Չնայած նման վիճակին, քվեարկության ընթացքում տարբեր տեղամասերից ընդդիմադիր թեկնածուների վստահված անձինք բացահայտում եւ հրապարակում էին տեղեկություններ տարբեր ընտրախախտումների վերաբերյալ: Մարդիկ արձանագրում էին, որ իրենց տան հասցեներում գրանցված են այլ անձինք, իսկ դա նշանակում է, որ իշխանությունը նախապես իր կողմնակիցներին՝վարձկանների է գրանցել ինչ-որ հասցեներում, որոնք այդ օր քվեարկել են, գուցե ոչ մեկ ընտրատեղամասում: Մի տեղամասում ծրարից ՔՊ-ի երկու քվեաթերթիկ դուրս եկավ, ինչը նշանակում է, որ ընտրատեղամասերից դուրս եղել են ՔՊ-ի քվեաթերթիկներ, մարդկանց նախապես տվել են քվեաթերթիկ, արձանագրվել են բաց քվեարկության կամ ընտրողներին ուղղորդելու, նրանց փոխարեն քվեարկելու դեպքեր: Ընտրողներին տեղամասեր տեղափոխելը, նրանց այդ ընթացքում համապատասխան մշակման ենթարկելը կրել են մասսայական բնույթ:

Իշխանությունն օգտագործեց իր վարչական, քրեական եւ ֆինանսական ռեսուրսը: Ընտրություններից առաջ սկսվեց բարեգործական միջոցառումների շարք, որի ընթացքում գյուղերում բարեգործության անվան տակ բաժանվում էր ընտրակաշառք, այդ թվում՝ գումարի տեսքով: Մի քանի դեպք բացահայտվեց շատ պատահաբար, ինչը նշանակում է, որ նման դեպքերը շատ ավելին են եղել:

Ընդդիմադիր տրամադրված մարդկանց մեծ մասը կորցրել է հավատն ընտրությունների եւ դրա միջոցով իրավիճակ փոխելու հնարավորության նկատմամբ: Մարդիկ աչքի առաջ ունեն Փարաքարի, Գյումրու, Ալավերդու, Բերդի, Վանաձորի եւ Հայաստանի տասնյակ այլ համայնքների ու համայնքապետերի օրինակները, երբ ընտրությունների արդյունքում ընտրվում է ոչ ՔՊ-ական թեկնածու, բայց իշխանությունը բռնաճնշումներով, կեղծ քրեական գործերով, մանդատագողությամբ, շանտաժով եւ սպառնալիքներով այդ մարդկանց կալանավորում է, հեռացնում իշխանությունից կամ ստիպում հավատափոխ լինել: Ընտրություններից հետո ամենատարածված խոսակցությունն այն էր, որ ամենահավանական թեկնածու Սեւակ Խաչատրյանը կարող է հանգիստ լինել իր կյանքի եւ ազատության համար, իրեն չեն սպանի կամ առնվազն կալանավորի:

Մանր, հանրային փոքր աջակցություն ունեցող կուսակցությունների եւ թեկնածուների մասնակցությունը ընտրություններին ձեռնտու է միայն իշխանությանը, այդ կուսակցությունները եւ թեկնածուները ձայն են գողանում ընդդիմությունից եւ հօգուտ իշխանության, անկախ նրանից՝ անում են դա գիտակցվա՞ծ, ինչպես, օրինակ, իշխանության սատելիտ կուսակցությունները, թե՞ ուղղակի այդպես ստացվում է: Դեռեւս նախընտրական շրջանում ընդդիմադիր թեկնածուներից մեկին իր շտաբում ասացի, որ եթե իրենք 5 տոկոսից պակաս ձայն ստանան, կստացվի, որ աշխատել են հօգուտ Փաշինյանի: Նա համաձայնեց՝ ասելով որ 10 տոկոսից ավելի ձայն են ստանալու: Արդյունքում 1,5 տոկոս ձայն ստացան, փաստորեն, այդքանով աջակցելով իշխանությանը: Ճիշտ է, Փաշինյանն իր սատելիտներով՝ «Հանրապետություն» եւ «Ազատ դեմոկրատներով» էլ լուծեց իր խնդիրը, բայց ընդդիմադիր ընտրազանգվածի ձայները փոշիացնելը ոչ մի արդարացում չունի:

Էջմիածնի համայնքապետի ընտրությունները սովորական ընտրություն չէին, Փաշինյանը դրանք հատուկ էր կազմակերպել, որ 2026 թվականի խորհրդարանական ընտրություններին գնա ոչ թե Գյումրու եւ Փարաքարի պատմությունների նստվածքով, այլ՝ որպես հաղթող կուսակցության ղեկավար: Նրան հաջողվում է խաբել ու մանիպուլացնել հայ հասարակությանը, հաջողվում է տարբեր քաղաքական եւ ընտրական տեխնոլոգիաների միջոցով ստանալ ցանկալի արդյունք, բայց հանրային ատելությունն իր եւ իր իշխանության նկատմամբ դրանից չի փոքրանում, այլ ավելի է մեծանում եւ ուժեղանում: Իսկ այդ ատելությունը մի օր պայթելու է, դրա համար ընդամենը հարմար առիթ ու հնարավորություն է պետք, որն արագորեն հասունանում եւ մոտենում է:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 18.11.2025թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ՝ ԱՌԱՆՑ ՆԻԿՈԼ ՈՒ ԱՌԱՆՑ ԱՅՍ ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ

Հիմա արդեն անզեն աչքով էլ է պարզ, որ Հայաստանում օր-օրի թափ հավաքող նախընտրական քարոզարշավը սխալ հունով է ընթանում: Եվ այդ սխալ հունը ոչ միայն իշխանության, այլ նաեւ ընդդիմության քարոզարշավին է վերաբերում: Նաեւ նրա քարոզարշավին, որովհետեւ, եթե օրվա իշխանությունն այս ընտրություններին ուզում է «պատերազմ, թե խաղաղություն» կոնցեպտը փաթաթել հասարակության վզին, ապա ընդդիմությունն էլ իր հերթին ուզում է այդ ընտրություններն Արցախի ու արցախցու, Սյունիքի ու սյունեցու, Թալինի ու թալինցու, Վարդենիսի ու վարդենիսցու, Տավուշի ու տավուշցու, Գյումրու ու գյումրեցու, Վանաձորի ու վանաձորցու, Վաղարշապատի ու վաղարշապատցու մասին ընտրություն դարձնել:

Այնինչ, գալիք ընտրությունները որքան որ պատերազմի ու խաղաղության միջեւ չընտրելու, այդքան էլ Արցախի ու արցախցու, Սյունիքի ու սյունեցու, Թալինի ու թալինցու... մասին չեն: Այդ ընտրությունները այդ բոլորին միացրած ու այդ բոլորով՝ Հայաստանի մասին են: Այս ընդդիմությունը պետք է գիտակցի նաեւ, որքան այս իշխանությունը պետք է հասկանա, որ այս ընտրությունները ոչ թե Մոսկվայից ու Վաշինգտոնից Վաշինգտոնին ընտրելու եւ Մոսկվային չընտրելու, այդքան էլ ո՛չ Մոսկվայի ու Վաշինգտոնի միջեւ ընտրելու եւ ո՛չ էլ դրանում Վաշինգտոնին չընտրելու եւ Մոսկվային ընտրելու մասին չեն: Այս ընտրությունները Հայաստանն ընտրելու, ավելի ճիշտ՝ Հայաստանին ընտրելու մասին են:

Եվ այս իմաստով, նա՝ այսօրվա ընդդիմությունը, որը նաեւ այս երկրի անցած 20-25 տարվա իշխանությունն է եղել, պետք է իմանա, որ այնքան, ինչքան իրեն չեն ներվում երկրում իշխանություն ունենալու իր 20-25 տարիները, դրանից մի քանի անգամ ավել, չի ներվի, եթե նա այս ընտրություններն Արցախի ու արցախցու, Սյունիքի ու սյունեցու, Թալինի ու թալինցու, Գյումրու ու գյումրեցու, Վանաձորի ու վանաձորցու, Իջեւանի ու իջեւանցու միջեւ ընտրություն դարձնելով հանդերձ, նաեւ Մոսկվայի ու Վաշինգտոնի, Բրյուսելի ու Պեկինի միջեւ ընտրության վերածի:

Այս ընդդիմությունը պետք է գիտակցի, որ այս ընտրություններն Արեւմուտքի ու Արեւելքի, Հյուսիսի ու Հարավի միջեւ ընտրություն դարձնելով, դրանց Նիկոլին քիչ հայհոյելու կամ շատ հայհոյելու տրամաբանությամբ մասնակցելով չէ, որ ինքը կհաղթի:

Իր իշխանավարման ժամանակ երկրի անկախության 20-25 տարիներն անգործության վրա ծախսած այս ընդդիմությունը պետք է հասկանա, որ այս երկրի ընտրությունն այսօր ոչ թե Նիկոլի ու իրենց, այլ առանց Նիկոլի ու առանց իրենց եւ Նիկոլով ու իրենցով Հայաստանների միջեւ է:

Պետք է հասկանա, որ այս երկրի այսօրվա խնդիրն այլեւս ոչ թե իրենցից մեկին ընտրելը եւ մյուսին չընտրելը, այլ այն գործիչներին, այն թիմին գտնելն ու նրանց իշխանության բերելն է, ովքեր գիտեն, թե ինչպես պետք է բանակն ավելի մարտունակ դարձնեն, ովքեր գիտեն, թե ինչպես պետք է տնտեսության արդյունաբերականացման եւ արդիականացման խնդիրները լուծեն, ովքեր գիտեն, թե ինչպես պիտի երկրի դեմոգրաֆիական խնդիրների լուծման ամենաօպտիմալ լուծումները գտնեն, եւ, վերջապես, ովքեր գիտեն, թե Թուրքիայի ու Ադրբեջանի, Ռուսաստանի ու Արեւմուտքի հետ ինչպես պիտի բանակցեն ու ինչի մասին պիտի խոսեն:

Պետք է հասկանան, որ իրերի ու հանգամանքների այսպիսի դասավորության պայմաններում, ինչքան իշխանությունների, այնքան էլ իրենց համար պարտադիրը ոչ թե ամեն գնով այս երկրի ապագայում իրենց տեղը գտնելն է, այլ հեռանալն ու այս երկրին հանգիստ թողնելը:

Գալուստ ՍԱՐԳՍՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am